№ 177 ՈՒՐԲԱԹ, 13 ՕԳՈՍՏՈՍԻ

1910

ԵՐԵՍՈՒՆՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՈՒՐԲԱԹ, 13 ՕԳՈՍՏՈՍԻ № 177

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Сергіевская ул., № 5.
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Խմբագրատան տելեֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի՛ կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզվով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.
Խմբագրատան տելեֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՄՇԱԿ

Հասցէն. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».
TIFLIS, Rédaction «MSCHAK».

ՕԳՈՍՏՈՍԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՅ ՎԵՐՋԸ 5 ՌՈՒԲԼԻ

12 ամսվ.՝ 10 ր., 6 և 7 ամսվ. 6 ր., ամսակ. 1 ր. Ամերիկա՝ տարեկան 6 դօլլար, Եւրօպա՝ 32 ֆր., Պարսկաստան՝ 10 ր., Թիւրքիա՝ 120 ղրուշ։ ● Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել հին հասցէն, նոյնպէս և 40 կոպ. (կարելի է և նամականիշով)։

Յայտարարութիւնների համար վճարում են. I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին 20 կոպ., վերջին երեսի վրա՝ 10 կոպ.։ Կովկասից դուրս յայտարարութիւնները ընդունվում են բացառապէս Торг. Домъ „Л. и Э. Метцль и Ко" ֆիրմայի միջոցով Մոսկվայում, Պետերբուրգում և Վարշավայում։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԸՆՏԻՐ ՀԱՏՈՒԱԾՆԵՐ
(ԷԺԱՆԱՑՐԱԾ)
Արձակ—370 եր. Բանաստեղծութիւն—419 եր.։ Գինը՝ 80 կ.։ Փոստով՝ գնողին՝ 30 կոպէկ։ Դիմել՝ 1) Москва, священнику Назарьянцъ, 2) Тифлисъ, Центральная книжная торговля, 3) Книжный магазинъ „Гиръ" և 4) Баку, книжный магазинъ „Сотрудникъ".
Մոսկվա դիմողը ճանապարհածախս չէ տալիս։
(5,13,20) ա. 901. 3—2

ՄԵՐՁԱՒՈՐ ԱՐԵՒԵԼՔ

III

Նայեցէք մեր Անդրկովկասի սահմանագծերի մօտ կատարվող առևտրական յարաբերութիւններին և դուք կը նկատէք, որ Ռուսաստանը մեծ քանակութեամբ գործարանական ապրանքներ է ուղարկում Պարսկաստան և նոյնպէս մեծ քանակութեամբ հում նիւթեր է ստանում Պարսկաստանից, իսկ Թիւրքիայի հետ նա չունի ապրանքների այդպիսի սերտ և ընդարձակ փոխանակութիւն։

Եթէ հաշուի առնենք նաև այն հանգամանքը, որ Պարսկաստանի հիւսիսային մասը գտնվում է Ռուսաստանի քաղաքական որոշ ազդեցութեան տակ, այն ժամանակ կը տեսնենք, որ Ռուսաստանը սկսում է իրապէս տիրել Պարսկաստանի այդ մասի վրա, և եթէ միջազգային հանգամանքները չեն ճանաչում այդ երկիրը իբրև Ռուսաստանի մաս, դա որոշ հանգամանքներում էական նշանակութիւն չունի։

Եւրօպական պետութիւնները շատ յաճախ բաւականանում են այդպիսի նուաճողական քաղաքականութեամբ։ Նրանք թողնում են երկրի մէջ եղած վարչութիւնը, իսկ նրան ենթարկում են իրանց տնտեսական և քաղաքական ազդեցութեան։ Այդպէս է օրինակ Եգիպտոսի վերաբերութեամբ Անգլիան, որ իրապէս տէրն է այդ երկրի։

Եթէ Պարսկաստանի վերաբերութեամբ մենք նկատում ենք, որ Ռուսաստանը իրապէս տիրում է նրա մի մասի վրա, նոյնը չենք կարող ասել Թիւրքիայի վերաբերութեամբ։ Ռուսաստանը քաղաքական ազդեցութիւն չունի Փոքր-Ասիայում և չէ զարգացրել առևտրական յարաբերութիւններ նրա հետ։

Եւ միայն նոր-նոր, սահմանադրական կարգեր հաստատվելուց յետոյ, սկսում է զարգանալ ապրանքների փոխանակութիւնը երկու երկիրների միջև։ Այս վերջին երկու տարիներում շատ հետաքրքրական և ուսանելի փորձեր են արված յարաբերութիւններ ստեղծելու հարևան երկիրների առևտրականների մէջ և կամաց-կամաց պարզվում է՝ թէ ինչ ուղղութեամբ և բնաւորութեամբ կարող է զարգանալ տրնտեսական փոխադարձութիւնը Անդրկովկասի թիւրքական սահմանագծի վրա։

Պէտք է նկատել, որ անցեալում, Աբդիւլ-Համիդի օրով, շատ անգամ փորձեր եղան առևտրական յարաբերութիւններ ստեղծելու Փոքր-Ասիայի և Անդրկովկասի միջև, տեղի ունեցան առևտրականների խորհրդակցութիւններ և մշակվեցին առևտրական-արդիւնաբերական ձեռնարկութիւնների ծրագիրներ և նոյն իսկ եղան գործերի աջող սկզբնաւորութիւններ. բայց օսմանեան պետութեան մէջ տիրող կարգերը չափազանց մեծ խոչընդոտ էին հանդիսանում ընդարձակ կանոնաւոր յարաբերութիւններ զարգացնելու համար։

Սակայն այն, ինչ որ աննպաստ հանգամանքների շնորհիւ մինչև այժմ ճնշվել և խեղդվել է, այժմ կարող է ազատ զարգացման ճանապարհի վրա դրվել և առաջ գնալ։ Անդրկովկասը և Փոքր-Ասիան ունեն միմեանց տալու և միմեանցից ստանալու շատ մթերքներ։ Նրանք կարող էին համերաշխ գործակցութեամբ հոգի ներշնչել ընդարձակ մի տարածութեան արդիւնաբերական կեանքին և նորանոր աշխատանքների աղբիւրներ գտնել ազգաբնակութեան համար, որ ներկայումս ապրում է կուսական հողերի և բնական հարստութիւնների կողքին, դատապարտված լինելով աղքատ և զրկանքներով լի կենցաղավարութեան և ապրուստի։

Անդրկովկասի և Փոքր-Ասիայի միջև առևտրական-արդիւնաբերական յարաբերութիւններ զարգացնելու գործում, անշուշտ, պէտք է մասնակցութիւն և գործունէութիւն ունենան անխտիր բոլոր ազգութիւնները՝ հայերը, թիւրքերը, քիւրդերը, վրացիները և ռուսները։ Բայց անկասկած է, որ շատ մեծ դեր է վերապահված այդ ասպարիզում, գոնէ նախնական տարիներում, հայ տարրին։

Եւ պէտք է եռանդով գործի ձեռնարկել, գիտակցաբար աշխատել բեղմնաւոր հետևանքների հասնելու համար։

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Տօկիօ, 11 օգոստոսի

Ներքին գործերի մինիստրի նախաձեռնութեամբ լրագիրները համաձայնութեան են եկել չը տպագրել Կորէայի միացման մասին ոչ պաշտօնական աղբիւրներից բղխած տեղեկութիւններ, մինչև որ կը հաստատվի միացման համաձայնութիւնը, որպիսին սպասվում է առաջիկայ երկուշաբթի և երեքշաբթի օրը։ Համաձայնութեան իսկական բնագիրը պետութիւնների ներկայացուցիչներին հաղորդվել է օգոստոսի 11-ին։ Համաձայնութիւնը, որքան մեզ յայտնի է, ստորագրվել է անցած երկուշաբթի օրը։ (Հ. Գ.)

Ցետինէ, 11 օգոստոսի

Պետ. Հեռ. Գործակալութեան թղթակցի հետ ունեցած տեսակցութեան ժամանակ Ֆերդինանդ թագաւորը յայտնել է, որ նա Ցետինէ է եկել հաստատելու իշխան Նիկօլայի հետ ունեցած իր վաղուցվայ բարեկամական անխզելի կապերը և բօլգար ժողովրդի դէպի չեռնօգօրցիները տածած եղբայրական սէրը։ Թագաւորը հիացած է իրան ցոյց տուած ընդունելութեամբ։ Իսկ բօլգարական մինիստր Պօպրիկօվը նոյն թղթակցին յայտնել է, որ թագաւորի այցելութիւնը ներկայանում է իբրև պատասխան իշխանի այն քայլին, որ առաջինը ինքը շնորհաւորեց Բօլգարիայի անկախութիւնը։ «Այստեղ խօսք լինել չէ կարող,—յայտնել է մինիստրը,—որ և է դաշնագրի մասին, որովհետև Բօլգարիան առանց նրան էլ կապված է Չեռնօգօրիայի հետ շատ սերտ բարեկամական կապերով»։ Ի դէպ, Պօպրիկօվը խնդրել է հերքել սերբիական լրագիրների հաղորդած այն լուրը, որ իբրև թէ կապված է Աւստրո-Ունգարիայի հետ զինւորական դաշնագիր։ Անցնելով թիւրք-բօլգարական յարաբերութիւններին, Պօպրիկօվը յայտնել է, որ երբ բանակցութիւններից պարզվեց, որ Բօլգարիան մտադիր չէ խառնվել Թիւրքիայի ներքին գործերին Մակեդօնիայի ազգաբնակութեան զինաթափ անելու հարցի առիթով և միայն անկեղծ ցանկութիւն ունի պահպանել բարեկամական յարաբերութիւնները՝ Թիւրքիան քննութիւն նշանակեց զինաթափման ժամանակ կատարած օրինազանցութիւնների համար։ Այժմ կարելի է յուսալ, որ փախստականների արտագաղթը կը դադարէ և բարեկամական լուծում կը տրվի թիւրիմացութիւններին։ Վախենալու հարկ չը կայ. Բօլգարիան արկածների չէ ձգտում և ցանկանում է ապրել թիւրքերի հետ բարեկամաբար։ (Հ. Գ.)

Ցետինէ, 11 օգոստոսի

Առաւօտեան Ֆերդինանդի, Բօրիսի և իտալական թագաւորական ամոլի ներկայութեամբ իշխան Նիկօլայը դիտեց զօրքերին, որոնք հագել էին ռուսական զինւորական հագուստ։ (Հ. Գ.)

Բեռլին, 11 օգոստոսի

«Ֆրանկֆուրտէր-Ցայտունգը» և ուրիշ լրագիրներ մատնանշում են, որ Յունաստանում կատարվող ընտրութիւնները վկայում են, որ ժողովուրդը ցանկանում է յանձնել կառավարութեան ղեկը Վենեզիլօսին, որը ազգային ժողովի մէջ կունենայ ուժեղ կուսակցութիւն։ Ընտրվել են չորս կրետական թեկնածուներ, որոնց թւի մէջ է նաև Մավօմիխալիսը։ (Հ. Գ.)

Մոսկվա, 11 օգոստոսի

Անգլիական արտակարգ դեսպանութիւնը ճանապարհվել է Վիէննա։ (Հ. Գ.)

Պարիզ, 11 օգոստոսի

Զինւորական մինիստրութիւնը հաղորդում է, որ թէև զօրքի մէջ ընդունված հրացանը իր յատկութեամբ ստոր չէ կանգնած օտարերկրեայ հրացաններից, այնուամենայնիւ մինիստրութիւնը կարող է անհրաժեշտութեան դէպքում մտցնել տեխնիկայի ամենավերջին խօսքի համաձայն շինված հրացանի նոր ձևը։ Վերազինումը (перевооруженіе) կը պահանջի հազարաւոր միլիոն ֆրանկների ծախս. այդ պատճառով պէտք չէ ձեռնարկել դրան, երբ անհրաժեշտութիւն չէ զգացվում։ (Հ. Գ.)

Նիւ-Եօրկ, 11 օգոստոսի

Էյդախ նահանգի հիւսիսային մասում գտնվող անտառները իրանց ամբողջ տարածութեան վրա այրվում են։ Նախագահի առաջարկութեամբ Տաֆտը ուղարկել է ամբողջ միլիցիան օգնելու դաշնակից զօրքերին։ Հանգցնելու ժամանակ գտել են 5—6 դիակներ։ (Հ. Գ.)

Մանագուա, 11 օգոստոսի

Էստրադան յայտարարված է ժամանակաւոր նախագահ։ Վերջնական ընտրութիւնները կը կատարվեն 6 ամսվայ ընթացքում։ (Հ. Գ.)

Գոմել, 11 օգոստոսի

Բուդիլչա գիւղում փորլուծութիւնից հիւանդացել է 150 մարդ։ (Հ. Գ.)

Գոմել, 11 օգոստոսի

Սիբիրական ախտը թուլանում է։ Համաճարակի սկզբից հիւանդացել են 155 ձի և 449 գլուխ խոշոր անասուններ։ (Հ. Գ.)

Նիկօլաեվ, 11 օգոստոսի

Դուման միջնորդութիւն է յարուցել բաց անելու երրորդ հասարակական իգական գիմնազիա, որի շինութեան համար խնդրում է բաց թողնել անտոկոս 100,000 ր., խոստանալով վերադարձնել 20 տարվայ ընթացքում։ (Հ. Գ.)

Ուֆա, 11 օգոստոսի

Կադիրովա և Ստարըյէ Բալկի գիւղերում այրվել են 109 շինութիւններ։ (Հ. Գ.)

Բագու, 11 օգոստոսի

Լէնքօրանի գաւառի Բուրօվար գիւղի և պարսկական աւազակների միջև, որոնք քշում էին նրանց անասունները դէպի Պարսկաստան, հրացանաձգութիւն է պատահել, որի ընթացքում [illegible] (Հ. Գ.)

Հելսինգֆօրս, 8 օգոստոսի

Զօրքերի տեղափոխութեան կառավարիչ կոմս Կամենսկին պահանջել է բոլոր երկաթուղային կայարանների կառավարիչներից, որ անպատճառ իմանան ռուսաց լեզուն։ Ճանապարհների վարչութիւնը այդ առիթով դիմել է սենատին, յայտնելով՝ որ չէ կարելի պահանջել, որ ծառայութեան ընդունվողները անպայման իմանան ռուսաց լեզուն, և ընդհանրապէս որոշելը՝ թէ ո՛ր պաշտօնեաներն են պարտաւոր իմանալ այդ լեզուն—սենատի գործն է։ («Б»)

ԹԻՒՐՔԻԱՅԻ ՇՈՒՐՋԸ

Կ. Պօլիս, 11 օգոստոսի

Հիջազի երկաթուղային գլխաւոր տեսուչը յայտնել է, որ կառավարութիւնը մինչև երկու ամիս կը ձեռնարկէ շինելու Սամսօն-Սըվազեան ճանապարհը։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԽԵԼԱԳԱՐԸ *)

Ես նոր էի վերադարձել Թիֆլիս։

Այդ այն տարին էր, երբ ամբողջ Կովկասը լցված էր գաղթականների մի ամբողջ լէգիօնով. աւելի լաւ է ասել՝ փախստականների մի ամբողջ լէգիօնով, որովհետև նրանք փախստականներ էին, փախստականներ, և ոչ գաղթականներ...

Նրանք փախել էին, անցել սար ու ձոր, լեռ ու դաշտ, ջուր ու ցամաք, դաշտ ու անտառ... Փախել էին, եկել մի այլ երկիր, օտար երկիր, թողնելով հայրենի հողը, հայրենի գերեզմանները, և... այն ամենը, ինչ որ ամբողջ դարեր նրանք սիրել և պաշտել են, պաշտել ու մեծարել... Նրանք փախել էին, փախել կրակից ու հրից, սրից ու թրից, արիւնից ու կոտորածից, աւերակից, վախից ու սարսափից... Մայրը որդուն էր կորցրել, որդին՝ մօրը... Քոյրը եղբօրն էր մոռացել, եղբայրը՝ քրոջը... Արեան, հրի ու սրի սարսափն այն աստիճան դաժան, սարսափելի ու անողորմ էր, որ նրանք միմեանց կորցրել էին... Գուցէ և կատաղած թիւրք ամբոխի սրի հարուածներն էին բաժանել նրանց... Մէկի գլուխն էր թրատելով ընկել, միւսի ոտքը, երրորդի ձեռքը... ու, մահվան վերջին հառաչանքն արձակելով, նրանք սլացել էին մի այլ աշխարհ, ուր՝ ըստ բանաստեղծի՝ միայն կայ երջանիկ ու բաղձալի կեանք... Բայց, եթէ, իսկապէս, այնտեղ հասնում է մահվան վերջին հառաչանքը և եթէ այնտեղ կայ, իսկապէս, մարդասիրական գութ և թագաւորում է սիրոյ գէթ մի կայծ, այնտեղ, անշուշտ, հայի հառաչանքը, լաց ու կոծը մի օր կը միախառնվէին ու այնտեղ մի օր տեղի կունենար մի սարսափելի իրարանցում, դղրդիւն, և մի ակնթարթում վերջ կը դրվէր այն դամօկլեան սրին, որը դարերով կախված է հայի գլխին, ամբողջ դարեր ծծելով նրա արիւնը, մաշելով նրա կուրծքը... Նրանք փախել էին, եկել Կովկաս, մի կերպ տեղաւորվել, մի կերպ խմբվել էին, ու աչքերին ահի ու սարսափի դրոշմները դրած՝ ձեռքերը պարզել էին... հաց էին խնդրում... կտոր չոր հաց... մի պատառ հաց... Նրանք փախել էին այն տխուր ժամանակները, երբ Թիւրքահայաստանի խուլ անկիւններում, ամբողջ դարեր շարունակ, վայրենի, ֆանատիկոս թիւրք ամբոխի աւերածը շարունակվում էր, ուր դարաւոր խաւարն իր ճիրաններում կլանում էր ամբողջ օսմանեան պետութեան ոյժն ու կազմը... Այն ժամանակ, երբ այնտեղ սկսվեց կոտորածը... այն խուլ անկիւններում...

Օ՜, գազանացած թիւրք ամբոխը սարսափելի էր... Նա քանդում ու աւերում էր, կոտորում ու կողոպտում էր... Նա ոչնչացնում էր այն ամենը, ինչ պատկանում էր քրիստոնեայ հային, ինչ քրիստոնեայ հայը ամբողջ դարեր շինել ու պատրաստել էր, պահել ու պաշտպանել էր... Ֆանատիկոս թիւրքը, վայրենի քիւրդը միացած՝ լցված ֆանատիկոսին յատուկ թոյնով ու վրէժով՝ ոչնչացնում էին, կոտորում էին... Եւ հոսում էր արիւնը, ողողում շուրջը... Արեան գետերն էին վազում... Մարդկանց դիակներն ընկած էին դուրսը, փողոցներում. որի գլուխն էր ջարդված, որի մարմինը կիսված, ու թարմ արիւնը հոսում էր շուրջը... Վայրենի, կատաղած ամբոխը չէր բաւականանում նրանով, որ կոտորում էր, աւերում էր. նա դեռ անշունչ դիակները բարձրացնում էր, հանում նրա վրա եղած հագուստը և մերկ մարմինը կախում փողոցի պատերից։

Սարսափի այդ սև տարին էր, երբ Թիւրքահայաստանը կորցրեց իր աշխատաւոր բազուկները... Որն ընկաւ ամբոխի սրի տակ, որը կենդանի թաղվեց, որը փախաւ՝ ցերեկը թագնվելով խիտ անտառներում, ձորերի խորքերում, գիշերն՝ անցնելով անսահման տարածութիւն... վախի ու սարսափի մէջ, ահ ու դողի մէջ... Ու անցաւ նա սար ու դաշտ, լեռ ու անտառ, ու եկաւ քրիստոնեայ երկրի գիրկը...

Փախստականների մեծամասնութիւնը տեղաւորվել էր Կովկասի խորքերում, գլխաւորապէս Թիֆլիսում։

Այդ փախստականներից մի խումբ ապաստանել էր Թիֆլիսի յետ ընկած փողոցներից մէկում։ Այդ փողոցում ապրողներն արդէն ընտելացել էին նրանց։ Չէ՞ որ իրանց եղբայրներն ու քոյրերն էին... հեռու, շատ հեռու տեղերից եկած, փախած...

Ընտելացել էին ու օգնում էին...

Միայն փոքրիկ չարաճճիներն էին, որ հանգիստ չէին գտնում։ Նրանք հէնց որ տներից դուրս էին գալիս, իսկոյն հաւաքվում էին փախստականների խմբի բնակած տեղը ու սկսում էին «Գիւլ-Մարիամ, Գիւլ-Մարիամ, հէյ-վա՜յ, հէյ-վա՜յ» գոռալ, ու երբ փախստականների խմբից դուրս էր գալիս մի երկայնահասակ կին, գլուխը բաց, որի լայն ճակատի վրայով անցնում էին սև մազերը, դէմքին կնճիռները հաւաքված, մի փայտի կտոր ձեռքին, չարաճճիները նորից միաբերան «Գիւլ-Մարիամ, Գիւլ-Մարիամ, հէյ-վա՜յ, հէյ-վա՜յ» էին գոռում ու փախչում... Բայց Գիւլ-Մարիամը նրանց չէր հետևում։ Նա միայն մի ժպիտ էր արձակում, ապա մի քրքիջ, ու իր սև, խոշոր աչքերը դարձնելով փախչող չարաճճիներին՝ մրմնջում էր. «Հէյ-վա՜յ, հէյ-վա՜յ»... Նորից մի քրքիջ էր արձակում, նայում փախչող չարաճճիներին, ու նորից մտնում իր խրճիթը...

Եւ այդ շարունակվում էր ամեն օր։ Եւ ամեն օր նա դուրս էր գալիս իր կացարանից, նայում էր փախչող չարաճճիներին, կրկնում էր իր «Հէյ-վա՜յ, հէյ-վա՜յ» բացագանչութիւնը ու նորից մտնում իր կացարանը։

Արեան հեղեղներից, կրակի ու հրի, կոտորածի ու աւերածի սարսափից փախած մարդու հոգին շուտ չէ ընկճվում... Նրա միտքն է միայն պղտորվում, իսկ հոգին դեռ երկար կարողանում է կռուել... Եւ եթէ առժամանակ, մինչև անգամ, նրա հոգին ընկճվի, այդ՝ մռայլ յիշողութիւնն է նրան տանջում...

Գիւլ-Մարիամը երբեմն դուրս էր գալիս իր կացարանից, նստում էր տան դռան մօտ գտնված մի քարի վրա, աչքերը յառում էր դէպի հեռուն և երկար, երկար այդ դրութեան մէջ մնում...

Ես զգում էի, որ այդ րօպէին նրա առաջ պատկերանում էին սարերն ու ձորերը, լեռներն ու դաշտերը, ջրերն ու ցամաքը, անտառներն ու բլուրները, որոնցով նա անցել է, թռել է, ցերեկը թագնվելով խիտ անտառների խորքերում, գիշերը անցնելով անվերջ տարածութիւն...

Ես զգում էի, ու մարմնովս մի ցուրտ սարսուռ էր անցնում...

— Մայրիկ, ինչ կը մտածես,—դարձայ ես նրան մի օր, նկատելով նրան այդ դրութեան մէջ երկար ժամանակ ընկղմված։

Նա իսկոյն գլուխը բարձրացրեց, կարծես սթափվելով մի խոր մտքից, նայեց դէմքիս ու, կրկնելով իր սովորական «Հէյ-վա՜յ, հէյ-վա՜յ», բացագանչութիւնը, մի խոր հառաչանք արձակեց կրծքից...

Բայց... ոչ, չեմ կարծում, որ դա հառաչանք լինէր. ոչ... դա անէծք էր, անէծք անողորմ ճակատագրի դէմ, կեանքի խուլ հարուածների դէմ... Հարուածներ, որոնք կրծում են մարդու սիրտը...

Նրա հայեացքը լուրջ էր։ Նրա աչքերում դեռ փայլում էր սիրոյ կայծը...

— Միտքս ընկաւ նա... Հէյ-վա՜յ, հէյ-վա՜յ...,—մեղմ շշնջաց Գիւլ Մարիամը, մի անգամ էլ նայեց ինձ ու լռեց։

Ես նստեցի կողքին։ Այդ ժամանակ տեսնում էի, թէ ինչպէս չարաճճիները նորից ուզում էին հաւաքվել, բայց այս անգամ նրանց չաջողվեց։ Նրանք ցրվեցին։

— Այդ պզտիկներն ինձ գիժ կանուանեն,—ընդհատելով տիրող լռութիւնը՝ դար-

---

*) Այս պատմուածքի ռուսերէն թարգմանութիւնը տպված է «Весь Міръ» շաբաթաթերթում։

«Թանին» հաղորդում է, որ Մոնաստիրի վիլայէթի շատ գիւղերի բուլղար քահանաները, ուսուցիչները և աւագները իրանց գրաւոր շնորհակալութիւնը և երախտագիտութիւնն (?) են յայտնում յունական պատրիարքի դէմ գործադրվող քաղաքականութեան համար։ Նրանք յայտնում են, որ յուզմունքները և անկարգութիւնները առաջացնում էին պատրիարքից խրախուսվող չէտաները, և իրանց ուրախութիւնն են յայտնում Ալէքսանդր վարդապետի, կապիտան Դանկօյի և նրա ընկերակիցների ձերբակալութեան և զինուորական դատարանին յանձնելու առիթով։ (Հ. Գ.)

—

Կ. Պօլիս 8 օգոստոսի

Սուլթանը մտադիր է ձմեռը այցելել Պետերբուրգ։ («Б.»)

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

—

Սղնախ, 8 օգոստոսի

Մուկուզանի գիւղի հայոց եկեղեցու օրհնութիւնը կայացել է շատ շքեղ։ Եկեղեցի շինող Գիօրգի Մկէրվալիան հրաւիրել էր շատ քահանաների և ժողովրդին։ Նա իր հաշւով ճաշ էր տուել 400 հոգու։

Հայոց դպրոցի հոգաբարձութիւնն ինքնագլուխ, առանց ժողովրդի համաձայնութեան, կապալով տուել է մոմապահեստը տարեկան 500 րուբլով։ Տնտեսական եղանակով մոմապահեստը նախկին տարիները աւելի շատ է տուել, եթէ չասենք, որ ներկայ հոգաբարձուների ձեռքով մոմապահեստը հալվեց։ Կապալով տալու հարցը պէտք է վճռէր ծխ. ժողովը։

Այս օրերումս լինելու է հոգաբարձուների և երէցփոխների ընտրութիւնը։ Որոշ [illegible] նախօրօք աշխատում են անպատճառ իրանց թեկնածուներին անցկացնել։ Աւելի զարմանալին այն է, որ հոգաբարձու Վարդան Ենիկոլոփեանին ցանկանում են նորից վերընտրել, չը նայելով որ նա ծխ. կանոնադրութեան համաձայն իրաւունք չունի վերընտրվելու, որովհետև հաշիւ չէ տուել։

Գաւառում հացաբոյսերի բերքը լաւ է. խաղողի բերքն էլ լաւ է սպասվում։ N. N.

—

Ցարսկո-Կոլոդցի, 9 օգոստոսի

Թիֆլիսի նահանգապետը թոյլատրեց Կովկասի Հայոց Բարեգործ. Ընկերութեան Ցարսկիէ-Կոլոդցիի ճիւղի վարչութեան բանալ ձրի ժողովրդական գրադարան-ընթերցարան։

Գրադարան-ընթերցարանի պատասխանատու՝ կառավարութեան առաջ հաստատված է ուսուցիչ Յակոբ Գրիգորեան։

Գրադարան-ընթերցարանը կը բացվի յունվարից։ Նա ունենալու է գրքեր և պարբերական հրատարակութիւններ հայերէն, ռուսերէն և վրացերէն լեզուներով։ Նա տեղաւորված կը լինի հայոց դպրոցի շինութեան մէջ. Նրանից կօգտվեն հայեր, ռուսներ, վրացիներ ձրիաբար։

Ցարսկիէ-Կոլոդցին ունի մօտ 500 տուն ժողովուրդ, որից 30 տուն հայեր, 50 տուն վրացիներ, մնացածը ռուսներ։

Ներկայումս գրադարան-ընթերցարանները Սղնախի գաւառում գոյութիւն ունեն հետևեալ գիւղերում. Մաչխանում, Լագոդախում, Կարդանախում, Վէլիսցիխէում, Բոդբիսխեվում և Ցարսկիէ-Կոլոդցիում։ Գ.

—

Ղըլ-Ջախչախ, 10 օգոստոսի

Կարս-չայի ափին գտնվող Արգինա (Կիզիլօվկա) գիւղում խօլերայով մեռել են 2 երեխայ և 1 հասակաւոր մարդ։

Իշխանութեան կարգադրութեամբ արգելված է միրգ ծախել. չէ թոյլ տրվում մինչև անգամ ձմերուկ։

Արևմտեան Շիրակում արդէն հունձը վերջացել է. սկսել են կալսել։ Բերքը այս տարի ընդհանրապէս բաւարար է. մի քանի գիւղերի արտերը շատ լաւ են եղել, ինչպէս՝ օրինակ՝ Ղըլ-Ջախչախ, Փարկիտներ և այլն, բայց մի քանի գիւղերի էլ, յուլիսի սկիզբներին, կարկուտը մեծ վնասներ է հասցրել. ինչպէս օրինակ՝ Մեծ և Փոքր Ղըմլըի արտերն ամբողջովին փչացել են. վնասվել են նաև Ուզուն-Քիլիսայի մի քանի դաշտերը։

Եղանակը սկսել է ցրտել. գիշերները մինչև 4 աստիճան տաք է լինում. յաճախ եղեամ է նստում առաւօտները։ Սակայն ցերեկները տաքութիւնը բարձրանում է մինչև 35 աստիճան։ Գ. Տէր-Ռուբինեան

—

Ախալցխա, 9 օգոստոսի

Երէկ երրորդ անգամ հրաւիրված ծխական ժողովը՝ չը կայացաւ, որին առաջարկվելու էին՝ 1) գերեզմանոցի բարեկարգութեան և 2) բանտին ջուր մատակարարելու հարցերի մասին խորհրդակցելու և տնօրինելու. չը կայացաւ, որովհետև ներկայ էին միայն 4 անձ։ Ի՞նչ անուն տալ այդպիսի անտարբերութեան մի հասարակութեան կողմից, որը սիրում է խօսել հեռուները և բամբասել գործողներին, իսկ երբ իրանից պահանջում են յայտնել իր կարծիքը պաշտօնական ժողովներում, այն ժամանակ հեռու փախչում է և գլուխը պահում։ Ամօթ և նախատինք այն ամենքին, որոնք կարող են օգտակար լինել ընդհանուր հասարակական շահերին, առանց անձնականին վնասելու, և ծածկվում են երեսները։ Բարեբաղդաբար կ. Հ. Բ. Ը. տեղական բաժնի ընդհանուր ժողովն երէկ կայացաւ և կայացրեց որոշումներ առաջարկված հարցերի վերաբերութեամբ. 1) ժողովը միաձայն որոշեց բանալ ընկերութեան անունով գրադարան. 2) Վիրաբեան եղբայրների հետ ունեցած վէճն, եթէ երկու կողմի համաձայնութեամբ չը վերջանայ, յանձնել դատի, որ առանց իրաւունքի ընկերութեան շինութեան պատի մէջ ցցել են երկաթեայ ձողեր և օգտվում նրանից. 3) որոշվեց շնորհակալութեան ուղերձ մատուցանել Գրիգոր Բուդուղեանին նրա երկարամեայ արդիւնաւոր գործունէութեան համար տեղական վարչութեան անդամի պաշտօնում ներկայիս թէ անցեալում և 4) հին անդամների վրա ապառիկ մնացած անդամավճարները պահանջելու համար օրինական միջոցների դիմել ըստ հայեցողութեան տեղական վարչութեան։ Աւ. Աս.

—

Գանձակ, 10 օգոստոսի

Մեր այգիներն այս տարի բաւական առատ բերք են խոստանում։ Այն այգիները, որոնք իրանց ժամանակին բժշկութեան չեն ենթարկվել զանազան հիւանդութիւններից, վնասված տեղեր ունեն. վնասված այգիները շատ քիչ տեղ են բռնում այս տարի։ Ջուրը համեմատած անցած տարիների հետ կարելի է բաւարար համարել. Գանձակ գետը ջրի սակաւ տարիներում ունեցել է 50—60 բաշ ջուր. իսկ այս տարի ունի մօտ 90 բաշ ջուր, որի պատճառով այգիները ապահովված են ջրի նկատմամբ։

Կորինապատ քաղաքամասի 297 տուն բնակիչներին կովկասեան ջրաբաշխական տեսչի կողմից թոյլատրվեց միմիայն խմելու ջրի իրաւունք։ Ինչպէս լսում ենք հաւաստի աղբիւրից, տրված ջուրն էլ խողովակներով են հասցնելու Կորինապատ. այսպիսով բաւական նեղն է ձգելու նրանց՝ պարտէզների, բանջարանոցների ու ծառաստանների ջրելու խնդիրը։

Մեր շրջանի Բանանց, Զօվգառ, Խաչակապ, Կիլանց, Քարհատ և Փիբ գիւղերում հունձը վերջանալու վրա է։ Այս տարի արտերը առատ հունձ տուին. գիւղացին գոհ է իր վիճակից։

Այս տարի, համեմատած անցեալ տարիների հետ, գիւղերը ազատ են զանազան հիւանդութիւններից։ Բաւական մեծ ծառայութիւն է մատուցել Փիբ գիւղի դեղատունը իր շրջանին։ Բայց զարմանալին այն էր, որ այս ամառվան սէզոնին բժիշկը բացակայում էր դեղատնից։ Սարգօ

—

Շուշի, 8 օգոստոսի

Այսօր տեղիս Ղազանչեցոց եկեղեցում, հանդիսաւոր պատարագից յետոյ, մի խումբ ինտելիգենտների նախաձեռնութեամբ կատարվեց հոգեհանգիստ Գրիգոր Ջանշեանի յիշատակին՝ նրա մահվան տասնամեակի առիթով։ Կովկասում, Թիֆլիսից յետոյ, սա առաջին հոգեհանգիստն է, որ տեղի է ունենում մեր մէջ։ Պատարագին երգում էր երգեցիկ քառաձայն խումբը՝ Ստ. Դեմուրեանի ղեկավարութեամբ։ Պատարագի վերջում, պատարագիչ Եղիշէ քահ. Թարխանեան մի հակիրճ դամբանական խօսեց Ջանշեանի կեանքի և բեղմնաւոր գործունէութեան մասին՝ առանձնապէս շեշտելով մեծ մարդասէրի և տաղանդաւոր հրապարակախօսի կատարած խոշոր դերը հայկական մեծ կոտորածների առիթով։

Հոգեհանգիստը կատարվեց Եղիշէ վարդ. Ահարոնեանի, 4 քահանայի և երկսեռ հասարակութեան մասնակցութեամբ։ Գ.

ՄՈՒԹ ԱՆԿԻՒՆՆԵՐՈՒՄ

—

Կարսում այժմ համարեա ամեն տեղ խօսում են մի ինչ-որ բողոքագրի մասին ընդդէմ վիճակիս փոխանորդի, և իբր թէ Կարսի հայ ժողովրդի կողմից (!!) մատուցվելու է Վեհափառ Հայրապետին։

Մարդ անկեղծօրէն ցաւում է այդպիսի մարդկանց հոգեկան վիճակի վրա, որոնք Լաֆօնտէնի ճանճի նման բազմել են եզան պոզերին, փքվում ու աջ ու ձախ բղաւում են, թէ իրանք են սայլը առաջ տանողը։ Այդ սրտացաւ մարդիկ մի թուղթ ձեռքները ման են գալիս փողոցէ փողոց, խանութէ խանութ.

— Սա թուղթը մի ստորագրէս, ախբէր։

— Այդ ի՞նչ թուղթ է, Կիրակո՛ս աղա։

— Ախբէր, այս ի՞նչ բան է. մենք այդպէս վարդապետ չենք ուզում. խօլերան ընկել է մեր մէջ, անխնայ ջարդոտում է. նա իբրև քաջ հովիւ պէտք է Կարսում մնար, խօլեր գաղանից մեզ պաշտպանէր. իսկ նա կայնել մեր գլխին գայլի աւետարան է կարդում. «Հում ջուր խմել մի՛ք, շատ ուտել մի՛ք. ձեր ձեռքերը, շորերը, տները մաքուր պահեցէք...». Ո՞ր մէկն ասեմ. [illegible] փողերը շատ են. դրանցից հազար հատ էլ տպագրել է տուել ու գիւղերը ցրել. Ո՞ր մի փոխանորդ այդպիսի բան արեց. մի՞թէ ամենից խելացին դա է եղել։ Սարիղամիշից էլ հեռագիր է խփել, որ Եօթն-Վիրաց պատկերը Կարս չը բերեն. լաւ է որ այդ հեռագիրը ուշ հասաւ, մեր մարդիկ արդէն հասել էին Ալէքսանդրապօլ՝ հրաշագործին բերելու, թէ չէ՝ մենք նրա գլուխը կը ջարդէինք։

— Ի՞նչ ես ասում, Կիրակոս աղա, նա խոմ դոխտոր չէր, որ հիւանդին դարմանէր. ինքն էլ էր հիւանդացել. բժիշկ Ղազանճեանն էր նրան դեղ գրել։ Հիմա էլ որ մի քիչ լաւացել է, գնացել է Բասենի շրջանը, թափառում է գիւղէ գիւղ և իր վիճակի կարիքներին անձամբ տեղեկանում։

— Դու չը գիտես, ախբէր, մեր վարդապետի մասին թէև ասում են թէ համալսարանական է, բայց վարչագէտ մարդ չէ. ծխական դպրոցի հոգաբարձուները շատ լաւ են հասկացել նրա անկարողութիւնն ու ճամբու դրել։ Մենք այդպիսի փոխանորդ չենք ուզում. աղաչում եմ մէկ ստորագրիր սա թուղթը։

— Վա՛յ, Կիրակոս աղա, ես լսել եմ, որ անցեալ տարի հոգաբարձուներն ու ուսուցիչները իրար հետ լաւ եօլա են գնացել. այդ տարին ուրիշ տարիների նման ղալմաղալ չէ եղել դպրոցում. ուսումնարանը մի քանի տարիներից ի վեր իր վրա դիզված պարտքերը վճարել է, ինչպէս մի հոգաբարձու տարեկան ակտի ժամանակ կարդաց։ Այդ նրանից է, որ վարդապետը հոգաբարձուների հետ քաղաքում շրջել ու նուէրներ է հաւաքել։ Իմ լսելով՝ փոխանորդը դէմ է եղել ուսուցչական խմբի արձակման. հոգաբարձուներից շատերը ուզեցել են խմբին արձակել ու արձակել են. այս ու սրա նման պատճառներից ստիպված վարդապետը գործից քաշվել է։

— Չէ, ախբէ՛ր, չէ. դու ամեն բան սխալ ես իմացել. նա անգործ մարդ է. ամբողջ ձմեռը դատարկ է անցկացրել, կերել, խմել ու քնել է միայն։

— Կիրակո՛ս աղա, ես ծնվել եմ Կարսում և մինչև օրս ապրել եմ Կարսում, բայց չեմ տեսել կամ իմացել, որ մի փոխանորդ այստեղ ժողովրդական դասախօսութիւններ կազմակերպած լինի. ես ողջ ձմեռը ամեն կիրակի անհամբերութեամբ եմ սպասել այդ դասախօսութիւններին, օգտվել եմ դրանցից, իսկ դա բացառապէս Ուխտանէս վարդապետի գործն է։ Նա գիշերները ժամը երկուսից շուտ չէ քնել, իր վիճակի մասին է մտածել, քարոզներ է պատրաստել, թարգմանութիւններ է արել, ես այդ բոլորը գիտեմ, և շատ լաւ գիտեմ։ Նա մէկ պակասութիւն է միայն ունեցել. նա խիստ է վերաբերվել գեղծարար և օրինազանց պաշտօնեաների նկատմամբ։

— Ախբէ՛ր, ախր դու սխալ ես իմացել. նա անպէտք մարդ է. նրա ոտքը յաջորդարան մտնելուց դէսը հոգևոր կառավարութեան գործերը անկարգ ընթացք են ստացել. ապարդիւն գրագրութիւնները շատացել են, ծախսերը կրկնապատկվել, կասսան փող չէ մտնում... Ո՞ր մինն ասեմ։ Կառավարութեան գործերին տեղեակ մի մարդ մանրամասն պատմել է ինձ ամեն բան, նա շատ ուրիշներին էլ է պատմել, ինչ որ անժխտելի փաստ է, որ ասածները ճշմարիտ են. կարող եմ նրա անունն էլ տալ, բայց ի՞նչ հարկաւոր է. զգոյշ լինելը խելացիութիւն է, միայն դու ինձ հաւատա՛, ախբէր, հաւատա՛, որ Կարսի վիճակի հոգևոր և մտաւոր գործերը շուտով պիտի մթագնեն ու հանգչեն, եթէ այդ անճարակ վարդապետը Կարսում մի քիչ էլ մնայ։ Շուտով այս թուղթը ստորագրիր. մի ծանօթ ախբէր փողոցով անցնում է, նրան էլ պէտք է վազեմ ստորագրել տամ։

— Բայց, Կիրակո՛ս աղա, կարո՞ղ ես ինձ ասել թէ ո՞վ է կառավարութեան գործերին տեղեակ այդ մարդը։

— Ո՛չ, չեմ ասի։

— Ո՛չ, ես էլ չեմ ստորագրի։

Կարս Յերպրօ

«606»-Ը ՄՈՍԿՎԱՅՈՒՄ

(Խօսակցութիւն Մոսկվա քաղաքի կողմից Էրլիխի մօտ ուղարկված պրիվատ-դոցենտ Մ. Ա. Չլէնովի հետ)

—

Պրօֆ. Էրլիխի լաբորատորիայում հրաշքներ են կատարվում...

Լուրերն այդ առիթով յուզում են հարիւր հազարաւոր թշուառ հիւանդների, որոնց տանջված սրտերի մէջ կրկին պայծառ բոցով բռնկվեց յոյսը։

Եւ Մոսկվայում սպասում են, որ գերմանական կլինիկաներում կատարվող հրաշքները տեղի կունենան մեզ մօտ ևս։

Մեասնիցկայա հիւանդանոցը դիմեց Մոսկվայի քաղ. ինքնավարութեանը, խնդրելով ուղարկել Մ. Չլէնովին պրօֆ. Էրլիխի մօտ, որը գտել է «606» պրէպարատը, մանրամասն ծանօթանալու համար մարդկութեան այդ սարսափելի պատուհասի նոր բժշկութեան եղանակների հետ։

Քաղաքագլուխ Գուչկով դիմեց պրօֆ. Էրլիխին պաշտօնական նամակով, որի մէջ խնդրում էր գիտնականին թոյլատրել Չլէնովին ծանօթանալու նրա աշխատանքների հետ։

Հռչակաւոր գիտնականը մօսկվացի հիւանդների շահերին չափազանց ուշադիր վերաբերվեց, և Չլէնով վերին աստիճանի սիրալիր ընդունելութիւն գտաւ։

„Р. У." լրագրի աշխատակիցը խօսակցեց արտասահմանից նոր վերադարձած Չլէնովի հետ։

Մոսկվայում ժողովրդականութիւն վայելող վեներոլոգ Չլէնով ամենապայծառ յոյսերով է լցված նոր հակասիֆիլիստական դեղի վերաբերմամբ։

Այդ լաւատեսութեամբ են վարակել նրան Բեռլինի կլինիկաներում։

— Այցելելով Գերմանիայի բոլոր խոշորագոյն բժշկական կենտրոնները, ուր տեղի են ունենում «606»-ի սրսկումները, ես ամենապայծառ տպաւորութիւն դուրս բերի այդ հիւանդութեան բժշկութեան նոր եղանակից։ Այսպէս կասեմ. «606»-ը մի տարօրինակ միջոց է... Նրա գործադրութիւնից յետոյ անհետանում են սիֆիլիսի բոլոր յատկանշանները...

— Կարելի՞ է, արդեօք, իսկոյն եւեթ վերջնական գնահատութեան ենթարկել այդպէս մեծ երևացող գիւտը։

— Մենք տեսնում ենք միայն այն, ինչ տեղի ունի այս րօպէիս կլինիկաներում... Այս րօպէիս հրաշքներ են կատարվում... Սակայն, ի հարկէ, յայտնի չէ, թէ ի՞նչ դրութեան մէջ կը լինեն այդ կազդուրվածները 2—3 տարուց յետոյ...

— Այժմ, արդեօք, շատե՞րն են դիմում պրօֆ. Էրլիխին։ Պատմում են, որ հազարաւոր ուխտաւորներ են գնում նրա մօտ։

— Իմ ազգանունը այցելուների գրքի մէջ գրված էր № 4000-ի տակ։ Եթէ յանձնարարական նամակներ չունենայի, ստիպված կը լինէի շատ երկար սպասել...

— Հասարակութեան մէջ այն կարծիքն է տարածված, որ Էրլիխը պատահաբար է իր գիւտն արել...

— Սուտ է, հրաշագործ ապարատը հանճարաւոր խելքի աշխատանքի արդիւնք է։

ԽՕԼԵՐԱ

—

◆ Բիւլլետեն.—Օգոստ. 11-ի առ. ժամը 9-ից մինչև օգոստ. 12-ի առ. ժամը 9-ը Թիֆլիսում խօլերայով հիւանդացել են 2 հոգի, իսկ խօլերանման հիւանդութեամբ՝ 3 հոգի։ Հիւանդանոցում կային 26 հոգի, աւելացել են 2, մեռել՝ 1, ներկայումս կան 27 հոգի։

◆ Խօլերային հիւանդութեան նշաններով օգոստոսի 11-ին Թիֆլիսում հիւանդացել է և ուղարկվել խօլերային բարակը մէկ հոգի՝ Թիֆլիսեցի Յովհաննէս Գէորգեան Գրիգորեանց (առևտրական), որի բնակարանը ախտահանութեան է ենթարկված։

11 օգոստոսի

Պետերբուրգ.—Մի օրվայ ընթացքում հիւանդացել են խօլերայով 60, մեռել 19, բժշկվում են 715 հոգի։

Հեռ. Գործակալութիւնը հետևեալ հեռագիրներն է ստացել խօլերայի շարժման մասին վերջին շաբաթվայ ընթացքում։ Խէրսոնի նահանգում հիւանդացել են 1209 հոգի և մեռել՝ 488։ Պերմի նահանգում առաջվայ համեմատութեամբ համաճարակը թուլանում է։

Ժանտախտի դէմ մաքառող մասնաժողովի կարգադրութեամբ խօլերայի կողմից անբարեյաջող է յայտարարւում Կարսի շըր-

---

ձու նա ինձ։

Բայց ես լուռ էի։ Նրա դէմքին արդէն ես կարդում էի նրա ներքին աշխարհի կռիւը, փոթորիկը...

— Ես գիժ չեմ, տղաս, գիժ չեմ,—շարունակեց նա, մի պահ լռեց, ու սկսեց։ — Տարին վատ տարի էր, շա՛տ վատ տարի... Կամ սաստիկ անձրևներն էին արտերը ողողում, նոր բուսած հացահատիկները արմատից հանում, ոչնչացնում, իրանց հոսանքներին տուած՝ տանում, հեռացնում մայր հողից, կամ սաստիկ տաքը, շոգը, արեգակի ճառագայթներն էին խեղդում, կլանում։ Իսկ եթէ փոքր-ինչ երկինքը խնայում էր ու ժպտում վերից, այն ժամանակ էլ քիւրդն էր գալիս, վերցնում, տանում...

— Ու հայի վհատած սիրտը տառապում էր տանջանքի ովկիանում,—աւելացրի ես։

— Է՛հ, մենք սովորել ենք տանջվել, բայց երբեմն...

Ու այստեղ Գիւլ-Մարիամը պահ մի լռեց. Նրա գեղեցիկ աչքերում երևացին արտասուքի կաթիլները... Նա թևերով սրբեց արտասուքը, ու ժամանակ մնաց լուռ, ապա շարունակեց.

— Տարին վա՛տ, շատ վատ տարի էր... Գիւղը աղքատացել էր։ Հաց չը կար, ցորեն չը կար... Եղածը խլել, տարել էին... Տարե՛լ, խլե՛լ... Գիւղի դրութիւնը սարսափելի էր։ Աղքատութիւնը բաւական չէր, դեռ կառավարութիւնը զինւորների մի խումբ էին բերել, լցրել շրջակայ գիւղերը՝ աւազակներին բռնելու... Ի՞նչ աւազակներ... Նրանք աւազակներ չէին, չէ՛, ամմա՛ն... Նրանք գիւղի կորիճներն էին, հաւաքվել էին սարը, դատ էին պահանջում, դա՛տ... Համբերութիւնը իր վախճանին էր հասած։ Նրանք դատ էին պահանջում... Մէկի հարսն էր փախցված, մէկի որդու վիզն էր կտրված, որի աղջիկն էր բռնաբարված, որի տունը կրակի մատնված... Դատ էին կանչում... Ու նրանք՝ գիւղի կորիճները, հաւաքված սարը, դատ էին պահանջում... Իսկ զինւորների կատաղի խումբը ուղարկված էր նրանց փնտռելու... Նրանք մտնում էին խրճիթները, տակն ու վրա անում... Մեր որդոց, մեր տղամարդկանց էին փնտռում... Աղջիկդ սիրուն էր՝ տանում էին, որդիդ ողջ-առողջ էր՝ վիզը կտրում էին... Օ՜ֆֆ, տարին վա՛տ, շա՛տ վատ տարի էր... Էրիկս անյայտացաւ... Աղջիկս ու հարսս կորա՛ն... Ամմա՛ն... կորա՛ն... Մնացի մենակ... Տղաս էր միակ ապաւէնս։ Հա՛, սա չափ էր նա... սա չա՛փ...

Ու նա ձեռքը բարձրացրեց, ցոյց տուեց իր որդու բարձրութիւնը, հասակը։

— Նա էր մօտս, յոյսս ու ապաւէնս։ Ցերեկը անասունների հետ էինք անցնում, գիշերը մտնում էինք խրճիթ ու մինչև լոյս մնում անկողին... Աչքերնիս չէինք փակում... Ճրագ էլ չէինք վառում խրճիթում... Վտանգաւոր էր... Իսկ կատաղի զինւորների խմբերը վայրենի գազանների պէս ընկած խրճիթները՝ կոտորում և աւերում էին... Աւերում ու կոտորում էին... Ու մի կերպ ժամերս անցնում էինք մայր ու որդի, պահված, լուռ ու մունջ, որպէսզի նրանք, զափթիէները, չը տեսնէին... Կը տեսնէին, որ՝ տղաս շուտ-շուտ անյայտանում է... Տղա՛ս... Ամմա՛ն, ճֆֆ... Ես ևս գնում էի դուրս նրա ետևից, ու մի քանի րօպէից յետ դառնում, մտնում անկողին ու մինչև լոյս լուռ ու անխօս մնում... Սիրուն գիշեր էր... Սիրտս չը համբերեց... սատանան էր թէ չար դևն էր, չը գիտեմ, միտքս պղտորեց։ Պառկած էի։ Լսեցի՝ ինչպէս տղաս անկողնից դուրս ելաւ, առաւ փափախն ու, կամաց-կամաց բացելով խրճիթի դուռը, կամացուկ դուրս ելաւ, գնաց... Չը համբերեցի, ես էլ դուրս ելայ։ Գնացի կամացուկ, կամացուկ... նրա ետևից։ Տղաս ճանապարհը փոխեց. կամացուկ, ետևից։ Երկա՜ր գնացի... Նա մօտեցաւ զափթիէների վրաններից մէկին, կանգնեց։ Շատ չանցաւ, աւագ զափթիէն դուրս եկաւ վրանից, ու նրանք երկուսով գնացին առաջ... Օ՜ֆֆ, տեսայ, թէ ինչպէս նրանք միացան... Նրանք կամացուկ խօսում էին... Տղաս ճանապարհն էր ցոյց տալիս։ Ճանապա՜րհ... Թէ որտեղից պէտք էր անցնել սարերը, որ քաջերին կոտորեն... Օ՜ֆֆ, ամմա՛ն... Սիրտս ճմլկեց... Հազիւ կարողացայ շունչս պահել... Կատաղեցի... Շատ չանցաւ... մի ուրիշ զափթիէ մօտեցաւ նրանց, մի բան տուեց... Հաց էր... ամմա՛ն... Տղաս ագահութեամբ առաւ հացը, երկու ձեռքով պինդ բռնեց ու, կիսելով, կէսը դրեց կռան տակը, իսկ միւս կէսը սկսեց ագահութեամբ կծոտել... Հա, նա քաղցած էր... Ու նա սկսեց իր քայլերը կամացուկ դէպի տուն ուղղել։ Նա ամբողջ շաբաթ գիշերները հաց էր բերում տուն, ու միասին ուտում էինք... Որտեղի՞ց էր բերում, հիմա իմացայ... Նա ինձ կը խաբէր... Նորից սկսեցի հետևել նրան։ Օ՜ֆֆ, դևն էր, սատանան էր սիրտս մտել... Չը կարողացայ տանել... Սիրտս տրաքեց։ Ու տեսայ, թէ ինչպէս նա գիւղի մութ ճամբայով սկսեց տուն դառնալ... Չը կարողացայ, չէ, չը կարողացայ ինձ պահել... Մի մեծ քար էր ճանապարհին ընկած, նայեցի, քարը մեծ էր... մե՜ծ...

Այստեղ Գիւլ-Մարիամը փոքր ինչ կանգ առաւ, սրբեց ճակատը, նայեց ինձ ու շարունակեց.

— Ծանր էր քարը, բայց առայ, բարձրացրի, ու ձգեցի նրա՝ որդուս ետևից։ Քարը մեծ էր. նա ընկաւ նրա վրա, նրա գլխին, ու... նա, մի «ճֆֆ» անելով, ընկաւ... Նրա գլուխը ջախջախվեց... Թաւալվեց նրա արիւնոտ մարմինը... Պահ մի մնացի կանգնած նրա դիակի առաջ... Ապա փախայ... Սկսեցի վազե՛լ, վազե՛լ, վազե՛լ... Սարեր, ձորեր, դաշտ ու անտառ... էլ միտքս չէ... Միայն կը յիշեմ, մի խմբի պատահեցի... Հայ խումբ էր, նա էլ աւերածից ու կոտորածից էր փախչում... Միացայ նրանց հետ... Ու հասայ այստեղ... Տղա՛ս, ճֆֆ... Նա քիւրդի նման է. հէնց նրան այդպէս էլ կանչում էին, երբ կը բարկացնէր ընկերներին։ Տարիներ առաջ, երբ մեր գիւղը նորից լցված էին զափթիէներով, որոնք եկել էին «աւազակներին» բռնելու... Էլի արեան տարի էր, սարսափի տարի... Ես դեռ ջահել էի... Ինձ տեսան։ Նրանց մեծը ձեռքերս բռնեց, տարաւ իր վրանը... Այստեղից թէև փախայ, բայց... մի տարուց յետոյ տղաս աշխարհ եկաւ... Քիւրդիկս աշխարհ եկաւ... Հէ՛-հէ՛, նա էլ չը կայ...

Ու այստեղ մայրական սիրտը չը կարողացաւ իրան այլ ևս զսպել. նրա ձայնը խեղդվեց, արտասուքները գլորվում էին նրա կնճիռներով ծածկված դէմքով... Եւ նա տեղից բարձրացաւ, մի պահ կանգնեց, ու թևերով սրբեց արտասուքները...

— Հէ՛յ-վա՜յ,—բացագանչեց նա...—Նա էլ չը կայ, նա՛, տղաս... Հէ՛յ-վա՜յ, հէ՛յ-վա՜յ,—կրկնեց նա, ու բարձրացնելով իր յաղթանդամ ձեռքը՝ մի ամուր բռունցք զարկեց իր ճակատին։—Հէ՛յ-վա՜յ, հէ՛յ-վա՜յ,—մի թոյլ ճիչ արձակեց նա, ու ցած ընկաւ գետին...

— Իսկ յետո՞յ։

— Էլ չեմ յիշում։

—

Այդ օրից արդէն տարիներ են անցել, երկա՜ր, ձի՜գ տարիներ... Եւ այդ տարիների ընթացքում շատ դէպքեր են պատահել կեանքիս մէջ... և մոռացութեան ենթարկվել... Բայց կան դէպքեր, որոնք թէև երբեք մոռացութեան չեն ենթարկվի, սակայն սև քօղով ծածկված մնում են՝ մինչև համբերութեան բաժակը լցվում է...

Յիշեցի այս պատմուածքը, երբ իմացայ, որ այնտեղ, ուր երէկ արեան հեղեղներ էին վազում, ուր արդար քրտինքով հաց վաստակող գեղջուկը միշտ զուրկ էր հացից, ուր պատիւ, գոյք գոյութիւն չունէին, այնտեղ, այն երկրում, այսօր խօսում են քաղաքակրթութեան, առաջադիմութեան, կուլտուրայի և առհասարակ մարդկային կեանքի բարօրութեան ու բարգաւաճման մասին։ Եւ խօսում են պարլամենտում՝ ժողովրդի ներկայացուցիչները։ Լևոն Գրիգորեանց ջանը, կիէվի նահանգը, Նովօրօսսիյսկի շըրջանը, Կրասնովօդսկը։

Վտանգաւոր է համարվում Մոսկվայի և Բաթումի նահանգը։

Եւպատօրիա քաղաքում խօլերան տարածվում է, իսկ գաւառում հետզհետէ քըչանում։ Համաճարակի զարգացման առաջն առնելու համար եկել է նահանգապետը և այցելել տեղական հիւանդանոցները և բարակները, շրջել է շուկան, խօսակցութիւն է ունեցել թիւրք-բանւորների հետ, որոնց բացատրում էր՝ թէ ինչպէս պիտի պաշտպանվել խօլերայից։ (Հ. Գ.)

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Քաղաքային վարչութիւնը մի զեկուցում է պատրաստում ներկայացնելու դումային, առաջիկայ նիստերից մէկում, Աւճալայի զտիչները (ֆիլտրները) ընդարձակելու մասին, օրական 500,000 վեդրօ ջուր ևս զտելու, որպէսզի հնարաւորութիւն լինի գարնանից քաղաքին մատակարարելու միայն զտված ջուր, բացի աղբիւրաջրից։

◆ Բարձրագոյն դպրոցներում, ինչպէս յայտնի է, խնդիրները վաղուց արդէն ներկայացված են։ Այժմ պարզվում է, որ քաղաքացիական ինժեներների ինստիտուտին ներկայացված է 450 խնդիր՝ ուսանելու մըտնել ցանկացողներից։ Առաջին սեմեստրում, գոնէ ազատ տեղերի թիւը 115 է։ Լեռնային ինստիտուտին տրված են 800 խնդիրներ, մինչդեռ ազատ տեղերի թիւը 100 է։ Էլեքտրօ-տեխնիկական ինստիտուտում տրված է 600 խնդիր։ Առաջին սեմեստրում կայ 80 ազատ տեղ, իսկ աւագ-սեմեստրներում ազատ տեղերի թիւը սահմանափակված չէ։

◆ «Земщина» թերթի ասելով՝ սինօդը նորերս ստացել է մանրամասն տեղեկագիր ուղղափառ եկեղեցու արդի դրութեան մասին Արևմտեան Ռուսաստանում։ Խղճի ազատութեան օրէնքը հրատարակվելուց յետոյ այնտեղ կաթօլիկութիւն են ընդունել 300,000 հոգի և ուղղափառների թիւը պակասել է մօտաւորապէս կրկնակի անգամ։

◆ Այսօր, ցերեկվայ ժամը 4-ին Թիֆլիս-Երևանի գնացքով Անի է մեկնում Պետերբուրգի համալսարանի ուսանողների գիտական արշաւախումբը, պրօֆ. Ն. Մառի կատարած վերջին պեղումների հետ ծանօթանալու համար։

◆ Օգոստոսի 11-ին, մօտաւորապէս երեկոյեան ժամը 3-ին, Անդրկովկասեան երկաթուղիների կօնդուկտօրի կին ազնուականուհի Օլգա Մգալօբլիշվիլին, որ ապրում է Մօլօկանսկայա փողոցի № 29 տանը, բնած ժամանակ իր սենեակում վիրաւորվեց ատրճանակից արձակված գնդակով։ Գնդակը կպչում է ձախ ականջին և անցնում դուրս գալիս աջ այտից։ Վիրաւորվածի սենեակում գտնված է մի ատրճանակ «Սմիտ և Վեսսօն» տեսակի, որը լցված է եղել «Բրաունինգ» տեսակի փամփուշտներով։ Կատարված քննութիւնը պարզել է, որ Օլ. Մգալօբլիշվիլիին վիրաւորել է իր տագր Կարպը, որ բանւորութեամբ է պարապում երկաթուղու Կվարելի կայարանում։ Վէրքը ծանր է։ Նրան ուղարկել են երկաթուղային հիւանդանոց։ Կալանաւորվածի մօտ խուզարկութիւն կատարելով գտել են վրացերէն լեզուով գրված մի տոմսակ, հետևեալ գրութեամբ. «Սպանութեանս համար ոչ ոքի չը մեղադրել. կեանքիս վերաբերմամբ դասաւորված աննպաստ հանգամանքների շնորհիւ՝ ինքս վերջ տուի կեանքիս»։ Մահափորձ կատարելու շարժառիթները առայժմ պարզված չեն։

◆ Ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնը շրջաբերականներով հաղորդել է ուսումնարանական շրջանների հոգաբարձուներին, որ նրանց համագումարը նշանակված է 1911 թւի յունվարի 15-ին և կը տևի մինչև յունվարի 22-ը։ Այդ համագումարում, ի միջի այլոց, քննվելու է կանանց միջնակարգ դպրոցները բարեկարգելու հարցը։

◆ Օգոստոսի 11-ին, Մօլօկանսկայա փողոցի № 27 տանը, Թիֆլիսեցի կառօ Գէօրգիէվիա Վուրուխանիձէն, 16 տարեկան, անձնասպանութիւն գործելու նպատակով ընդունել է կարբօլեան թթւուտ։ Նրան ուղարկել են Միքայէլեան հիւանդանոցը։ Նրա կեանքը վտանգից ազատ է։ Շարժառիթներն առայժմ անյայտ են։

◆ Մօլօկանսկայա փողոցի վրա իր սեփական № 29 տան մէջ, օգոստոսի 11-ին վիրաւորված Օլգա Մգալօբլիշվիլին յայտնել է, որ իրան վիրաւորել է իր տագրը անձնական վրիժառութեան հողի վրա, որովհետև ինքն մերժել է նիւթական օգնութիւն հասցնել իր միւս տագր Գէօրգի Մգալօբլիշվիլիին, և դուրս է արել իր բնակարանից, որի շնորհիւ, իբր թէ, նա հիւանդացել է թոքախտով։

◆ Օգոստոսի 10-ին Էլիզաբօլսկայա նըրբափողոցում Խիթարօվի հասարակաց տանը կարբօլեան թթւուտ ընդունելով անձնասպանութեան փորձ է արել Կլավդիա Պեկարսկայա։ Նրան անզգայ դրութեան մէջ ուղարկել են Միքայէլեան հիւանդանոց, ուր բժշկական օգնութիւն տալուց յետոյ թողել են տունը։ Մահափորձի շարժառիթը կեանքից զզւած լինելն է։

◆ Երևանի նահանգի ազնուական՝ Խարկովի համալսարանի ուսանող Բագրատ Մելիք-Մուրադեանը, 34 տարեկան, յայտնել է ոստիկանութեանը, որ օգոստոսի 10-ին, երեկոյեան ժամը 6-ի մօտերը Ալեքսանդրեան այգում երկու անյայտ չարագործներ ձգված ծրարի օգնութեամբ գողացել են իր փողի քսակը, որի մէջ կար 405 րուբլի, և անյայտացել։ Ոստիկանութեան ձեռք առած միջոցներով գողացողներից մէկը՝ Սղնախի գաւառի Սկօրի գիւղի բնակիչ Ստեփան Քիտէսօվ Ջիբաշվիլին, «Դօրօկին» մականունով, որը ապրում է Ցխնէտսկայա և Կազբէկսկայա փողոցների անկիւններում (պրօֆէսիօնալ քսակ ձգող), բռնված է արդէն և խոստովանել է կատարած գողութեան մասին։ Ջիբաշվիլիից բացի կալանաւորված է նաև նրա գործակիցը՝ Թիֆլիսեցի Յովսէփ Դմիտրիէվիչ Ջափարիձէն (գրպանահատ), որ ապրում է Լազրէվսկայա փողոց № 8 տանը։

◆ Երևանից հաղորդում, են որ օգոստոսի 5-ին ոստիկանութիւնը խուզարկութիւն կատարելով Միսակ Ղազարեանի գինետանը՝ 60 վեդրօյանոց տակառի տակ գտել է նետելու համար պատրաստ մի ռումբ $3\frac{1}{2}$ ֆ. ծանրութեամբ։

◆ Հ.-Նախիջեանի գաւառից հաղորդում են «Кавк.» լրագրին, որ Եարըմջա գիւղի բնակիչ Ստեփան Յովաննիսեանը լոյս օգոստոսի 1-ի գիշերը երբ քնած էր իր տան բակում, յանկարծ սաստիկ ցաւ է զգում։ Վեր թռչելով քնից, նա տեսնում է, որ իր և իր անկողնու վրա նաւթ են ածել և վառել։ Յովհաննիսեանը աղմուկ է բարձրացնում. նրա ձայնից վրա են հասնում ազգականներն ու հարևանները և հանգցնում կրակը։ Այրելու փորձ կատարելու մէջ կասկածվում է Յովհաննիսեանցի կինը, որի հետ նա լաւ չէր ապրում և մտադիր էր բաժանվել։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Դիլիջան, 8 օգոստոսի

Դիլիջանի ամառային ռօտօնդում երէկ, օգոստոսի 7-ին, կայացաւ յայտնի օպերային տենոր Ա. Կոստանեանի կօնցերտը մասնակցութեամբ Թիֆլիսին լաւ ծանօթ բարիտօն Բրօջիի։

Կոստանեանը երգեց իրան յատուկ երաժշտական ճաշակով և տեմպերամենտով Ռուբինշտէյնի, Չայկօվսկիի, Լէօնկօվալլօյի, Սպենդիարեանի և այլոց երկերից և հասարակութեան կողմից արժանացաւ բուռն ծափահարութիւնների։

Առանձնապէս խոր տպաւորութիւն թողեցին լսողների վրա «Паяцы» օպերայի յայտնի արիօզօն՝ «Смѣйся паяцъ», և «Подвигь», Չայկօվսկիի ռօմանսը, որոնց մէջ շնորհալի երգիչը փայլեց իր բոլոր երաժըշտական բարեմասնութիւններով։

Կօնցերտը վերջացաւ հայկական «Կռունկով» և «Մի լար բլբուլով», որոնք սքանչելի տպաւորութիւն թողեցին. այդ ազգային երգերը Կոստանեանը գիտէ երգել շաբլօնական շեշտերով և յոյզերով։

Կոստանեանը մի քանի տարի առաջ աջողութեամբ երգել էր Թիֆլիսի օպերային թատրօնում ամբողջ ձմերային սէզօնը։ Մեզ թւում է, որ նրա ձայնը այժմ աւելի ուժեղացել է, յղկվել և կատարելագործութեան առանձին փայլ է ստացել։

Պէտք է նկատել, որ հայերս առհասարակ չենք կարող պարծենալ ինտելիգէնտ պրօֆեսիօնալ երգիչներով։ Մենք կարող ենք յիշատակել միայն երեք անուններ, որոնք ճանաչված են և ընդունված երաժշտական աշխարհում—Տէրեան, Պապայեան և Կոստանեան—երեքն էլ բնութիւնից օժտված երաժշտական շնորհքով, ձգտել են լուրջ կատարելագործութեան Ռուսաստանում և արտասահմանում. Նրանք կարող են ամենայն իրաւամբ անուանվել գեղարուեստի ճշմարիտ սպասաւորներ։ Բրօջի, յայտնի իտալական բարիտօն, այժմ Թիֆլիսի կայսերական երաժշտական դպրոցի երգեցողութեան ուսուցիչն է։

Թէպէտ աւերիչ ժամանակը արդէն դրել է իր կնիքը նրա կոկորդի ձայնատու կապերի վրա, բայց և այնպէս այդ երգչի արտիստական ձիրքը, տեմպերամենտը և երաժշտական հմտութիւնը տակաւին տալիս են նրան ոյժ և կարողութիւն երգելու։ «Паяцы» օպերայի նախաբանը և «Julia»՝ Դէնցի ռօմանսը՝ նա երգեց այնպիսի տեմպերամէնտով և ճաշակով, որ յուզեց և յափշտակեց հանդիսականներին։ Այս շաբաթը Դիլիջանում կարելի է անուանել երաժշտական շաբաթ։

Մի օր առաջ տուել էր կօնցերտ այստեղ ամարանոցում ապրող տաղանդաւոր ջութակահար Վասիլև։

Կօնցերտի ծրագիրը կազմված էր Մոցարտի, Մէնդէլսօնի, Րիսի և Էրնստի երաժշտական նշանաւոր կտորներից և խիստ հետաքրքրական էր։

Կօնցերտին ներկայ գտնվող հասարակութիւնը վայելեց լիովին գեղարուեստական հաճոյք։ Յ. Ս.

—

Զաքաթալա, 9 օգոստոսի

Երէկ, ամսիս 8-ին, տեղիս սիրողների խումբը ծխական դպրոցի դահլիճում մի ներկայացում տուեց յօգուտ հայոց եկեղեցական-ծխական դպրոցի։ Ներկայացրին Է. Տէր Գրիգորեանի «Դամօկլեան սուր» դրաման և մի վօդ. «Ըստ յայտարարութեան» խորագրով։ Երաժշտական մասը շնորհիւ ուսանող Ա. Խաչատեանի՝ շատ աջող անցաւ։

Ինչպէս միշտ, այս անգամն էլ դահլիճը ծայրից-ծայր լի էր... հասարակ, դառն, հալալ քրտինքով ապրող դասակարգով։ Պատիւ նրան. Թող ամաչեն ունևորները, երբ տոմսակներ վաճառողներին տեսնելուն պէս ծակ ու ծուկ են մտնում... Թագնվում։

Մի ուրախալի երևոյթ, որ չենք կարող մոռացութեան տալ և չարձանագրել այստեղ, այն է որ՝ ռուս սիրողներից մի քանիսը՝ օրիորդ Н. А. Заславская, պ. պ. Квятковскій (ուսուցիչ), Пинчукъ (ուսուցիչ), ուսանող Лузинъ և ուրիշներ երաժըշտական մասում փայլում էին իրանց շնորհալի նուագածութեամբ, որոնք [illegible] եկան օգնելու մեր աղքատիկ դպրոցին։ Շնորհակալութեան արժանի են նաև բոլոր այն երիտասարդներն ու օրիորդները, որոնք այս անգամ շատ գեղեցիկ կերպով կատարեցին իրանց ստանձնած դերերը։

Զուտ արդիւնք դպրոցին մնաց մօտ 65 րուբլի։ Աստ. Բէկ-Յովսէփեան

Մ Ա Մ Ո Ւ Լ

«NEW-YORK AMERICAN»-Ի ԿԱՐԾԻՔԸ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ

Ընթերցող հասարակութեանը յայտնի պիտի լինի, որ մօտ երեք տարի սրանից առաջ Ամերիկայում բուն դրած Արգուեան*) կոչված ոճրագործ խմբակի ձեռքով Նիւ-Եօրկում սպանվեց տեղացի մի հայ հարուստ՝ Թաւշանճեան ազգանունով, որը զոհ գնաց ոճրագործ խմբակի դաւադիր գնդակին, փող չը տալու պատճառով։ Այս եղեռնագործութիւնը առաջ բերեց ամերիկեան մամուլի և հասարակութեան զայրոյթը, և գործը այն տեղը հասաւ, որ մամուլի և գործիչների մի մասը սկսեց պահանջել հանրապետական կառավարութիւնից՝ չը հիւրընկալել այլ ևս ամերիկեան հողի վրա հայ գաղթականներին։ Այս առիթով նոյն իսկ հարց յարուցվեց ամերիկեան սենատում ծերակուտական պէնների կողմից, որը հայերին Ամերիկայում հիւրընկալելու դէմ էր խօսում։

Մի ուրիշ ամերիկացի, մր. Հօլ անունով, հայերին անուանեց «անփափագելի քաղաքացիներ»։ Ներկայիս ահա այս հարցն է, որ նորից քննադատութեան առարկայ է դարձել Միացեալ Նահանգներում, որի առիթով «New-York American» լրագրի խմբագրապետ գնդապետ Թէմֆլ Գրէյվզը իր թերթում զետեղել է հայերի հասցէին ուղղված մի հետաքրքրական ու համակրելի յօդուած, որով պատմականօրէն ուսումնասիրած լինելով հայերին, առարկում է այն ամերիկացիներին, որոնք ցոյց տուին անհամբերատարութիւն դէպի հայերը ընդհանրապէս, երբ վերոյիշեալ ոճիրը մասնակի մի երևոյթ էր և ոչ մի կերպ չէ տարածվում ամբողջ հայութեան վրա։

Վերոյիշեալ յօդուածը, որը տպված է Նիւ-Եօրկի «Երիտասարդ Հայաստան» թերթում, առաջ ենք բերում ամբողջապէս։

«Ես ուրախ եմ տարակարծիք գտնուել այն նշանաւոր անձէն, որ հայերը կը նկատէ «անփափագելի քաղաքացիներ»։

«Չեմ տեսներ ինչպէս հայ ազգին այս յաւէտ վայրենի քննադատը կրնայ պատմութիւն գտնալ ու ասանկ յետին մտքեր յայտնել։

«Հայերը, իրօք, զարմանալի ժողովուրդ մըն են։

«Յոյները եթէ կը պծվինք իբրև արևմտեան քաղաքակրթութեան հիմնարկիչները, պէտք չէ մոռնալ, թէ հայերն ալ այդ քաղաքակրթութեան էն զօրաւոր պաշտպաններն էին։ Եւրոպա հայերուն դիմադրութեան շնորհիւն էր, որ կրցաւ ասիական ոտնձգութիւններէն պրծիլ։ Ասիական արշաւանքին ճամբուն վրա, գտնուելով, հայը առաջին հարուածը կրեց ու դարերով մաքառեցաւ պարսիկներուն, թիւրքմէններուն, թաթարներուն, մամլուքներուն և թուրքերուն հետ արևմտեան գաղափարականներու սիրոյն համար, որոնցմէ տոգորուած էր։ Գրիգոր ԺԳ. պապը իր 1384-ի մէկ կոնդակով ցոյց կուտայ, թէ հայերը ամեն կերպով օգներ են խաչակիրներուն, և կը հրահանգէ իր հետևորդներուն յարգել զանոնք, իբրև եւրոպական քաղաքակրթութեան յառաջապահները Արևելքի մէջ։

«Պատմութենէն կը տեսնենք, թէ Յունաստանի բանակները անպարտելի ընծայող դիւցազն Ներսէսը հայ մըն էր, նոյնպէս ս. Գրիգոր Հաղեանցնին ուսուցիչը, Պրոյերիոս, որուն համար Հռովմ արձան մը կանգնեց, անոր վրայ գրելով «Աշխարհի Հռովմէն առ պերճախօսութեան թագաւոր Պրոյերիոսի»։

«Բիւզանդական կայսրութիւնը հայերու շնորհիւն էր որ փայլեցաւ։ Գերմանացի գիտնական Գելցըր կը կարծէ, որ հայ կայսրները շրջանը էն փառաւորն էր վաբին կայսրութեան պատմութեան մէջ։ Լևոն Ե., Վասիլ Բ. ու մանաւանդ Յովհաննէս Զմշկիկ բիւզանդական կայսրութեան էն մեծ դէմքերն են։

«Հայերը արդի ժամանակի մէջ կարևոր դերեր խաղացեր են Լեհաստան, Հունգարիա, Ռուսիա, Եգիպտոս ու Ամերիկա։ Հայերը Լեհաստանի տուած են զիւանագէտներու, բանաստեղծներու և զինուորականներու շարք մը։

«1410 ին հայ ազնուականութիւնը կը միանար Վլադիսլավ Եակէլլօյի բանակներուն և կռւելով Գրունվալդի ճակատամարտին մէջ յաղթանակ ձեռք կը բերէր։

«Ու երբ Աւստրիան մեծ պատերազմ կը մղէր թիւրքերու դէմ 1683 թուականին, 5000 հայեր արիաբար կռուեցան թիւրքերու դէմ և օգնեցին Սօբէսքի թագաւորին զանոնք յաղթելու։ Ռուսիա գեներալ Լօրիս-Մէլիքօվի, Մադաթօվի, Տէր-Ղուկասօվի պէս զինուորականներու օգնութեամբ էր, որ Պարսկաստանը և Թիւրքիան կրցաւ նուաճել։

«Լօրիս-Մէլիքօվը սահմանադրութիւն մըն ալ գծեց Ռուսաստանի համար, որն Ալեքսանդր Ա. պիտի յայտարարէր, եթէ չսպաննէին զայն նիհիլիստները։

«Նուպար փաշան էր, որ Եգիպտոսի մէջ եւրոպական վարչութիւն մտցուց ու ազատեց զայն թիւրքերոյ զզուելի լուծէն։

«Ադամեան, որ, ռուս քննադատներու համաձայն, աւելի լաւ կը ներկայացնէր Համլէտը, քան Սալվինի ու Ռոսսի, ծովանկարիչ Այվազովսկի և հանքաբան Արծրունի աշխարհահռչակ հայեր էին։

«Պօլսոյ նշանաւոր շէնքերը հայ ճարտարապետներու գործերն էին։ XIX-րդ դարու ազատական շարժումներուն մէջ հայերը մեծ դեր խաղացին։

«1848-ին ֆրանսական յեղափոխութեան ատեն պատնէշներու վրայ կռուող Ոսկանեանը Մաձձինիի ու Կավուրի հետ մերձ յարաբերութիւններու մէջ էր։

«Նոյն իսկ այսօր հայերը փառաւոր ապացոյց կուտան հնարամտութեան և խելացիութեան։

«Ամերիկեան Թղթադրամի գոյնը հայ մը հնարած է, որ աննշան մեռաւ։

«Մարիա Դուվալի աշակերտ Մանուէլեան ջրաքանութեան վրայ այնպիսի գիւտեր ըրաւ, որ զայն աշխարհի ամենամեծ գիտնականը համարեցին։ Եդգար Շահէնի և Յ. Մախոխեանի նկարները շարունակ գնահատուած ու բարձր մրցանակներու արժանացած են Ֆրանսայի ու Գերմանիայի սալօններուն մէջ։

«Զմոռնանք թէ ողբացեալ իտալացի բանաստեղծուհին՝ Վիկտօրիա Աղանուրն ալ հայ մըն էր։

«Իրօք այս ազնուամիտ, վեհանձն ժողովուրդը պիտի կրնայ զգացում, պատիւ, անձնուիրութիւն և մեծ օգտակարութիւն աւելցնել Ամերիկայի բաղադրեալ բնակչութեան վրայ։

«Հայերը լաւ մարդիկ են, լաւ քաղաքացիներ և լաւ զինուորներ։ Մեր ֆինանսային մինիստրներէն մէկը, ըսել կուզեմ՝ Օհայոյի կառավարիչ Թոմաս հայ սերունդէ էր։

«Մեր սպանօ-ամերիկեան պատերազմին ատեն Սանթ-Եագօյի ցամաքին վրայ առաջին անգամ ոտք կոխող զինուորը հայ մըն էր։

«Նիւ-Եօրկի մէջ հայը քաղաքացիական առաքինութեան բարձր ապացոյց կուտայ մաքուր կառավարութեան համար կռուելով ապականութեան ու աւազակութեան դէմ։

«Հայը պէտք է գրկաբաց ընդունուի յԱմերիկայի քաղաքացիութեան մէջ իր նախկին գործերուն համար, և անոնց, որ պիտի ընէ ապագային»։

Գերազանցօրէն ուրախալի է, որ օտարները հայութեան կատարած պատմական դերի նկատմամբ այսչափ նպաստաւոր կարծիքներ են յայտնում, բայց և որչափ ուրախալի կը լինէր, եթէ հայութիւնը և նրա անցեալը չը վիրաւորվէր մեզ չը ճանաչող օտարների կողմից, որի պատճառն էլ կրկին մենք ենք, որովհետև մեր ծոցում սնուցանում ենք Արգուեան ոճրագործ խմբակի նման մի կեղտ, որի սխրագործութիւնները մեզ չը ճանաչող օտարները ամբողջ հայութեանն են վերագրում և ի զուր տեղը պաշտպանողականների կարիք է զգացվում։

Յար. Գասպարեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Եւպատօրիա, 22 յուլիսի

Կարդալով «Մշակի» № 148-ում Պետրոս Թումանեանի «Սկզբունքային խնդիր» յօդուածը, ստիպված եմ հրապարակ հանել մամուլի մէջ մի փոքր մասը այն բոլոր փաստացի դէպքերի, թէ ինչպէս Եւպատօրիայի ռուսախօս հայոց դժբաղդ դպրոցը, զուրկ լինելով հսկողութիւնից, ուսուցիչ Թումանեանի կամքի ասպարէզ դառնալով, իր կոչմանը չէ ծառայում։

1907 թւի մարտին ես ստանձնեցի Եւպատօրիայի հայոց դպրոցի կրօնուսուցչութիւնը։ Հէնց առաջին անգամ տեսայ, որ դպրոցում գործածական լեզուն հայերէնը չէ, աշակերտները և դասատուները իրար հետ միշտ ռուսերէն են խօսում, հայերէն խօսք միայն լսվում է հայոց լեզուի և կրօնի դասի ժամանակ։ Իմ հարցիս՝ աւագ ուսուցիչ Պետ. Թումանեանը պատասխանում է անտարբեր կերպով. «Ոչինչ չենք կարող անել»։ Առաջարկում եմ ժողով կազմել այդ խնդրի առիթով։ Մանկավարժական ժողով է կայանում։ Դասատուներս ենք՝ Պետ. Թումանեանը, ռուսախօս վարժուհին և ես։ Հայոց դպրոցի կոչման մասին խօսելուցս յետոյ, առաջարկում եմ մէկ միջոց, որ է՝ դասատուներս բացի ռուսաց դասերից, միւս ժամանակ, նամանաւանդ աշակերտների ազատ ժամերին, հայերէն խօսենք։ Երկրորդ՝ այդ նպատակին հասնելու համար՝ հայոց լեզուով մանկական խաղեր սովորեցնել։ Պետ. Թումանեանը իմ առաջարկած միջոցները հայոց դպրոցներում «անգործնական» համարեց՝ ասելով. «Ես այս հարցի մասին անպատրաստ եմ եկել. կը մտածեմ և միջոցներ կառաջարկեմ»։ Օտարախօս հայոց դպրոցներում 5 տարի աւագութիւն և հայոց լեզուի ուսուցչութիւն անող Թումանեանը, դեռ նոր պիտի մտածէ և դեռ մտածում է... Ես յետոյ յիշեցնում էի Թումանեանին իր խոստումը, բայց մասնաւոր խօսակցութեան ժամանակ ասաց կրկին՝ «ոչ մի միջոց չի օգնի», Լեհաստանի հայերին օրինակ բերելով։ Տեսայ որ սա բացարձակ դրժում է։ Իսկ վարժուհին՝ հայոց ազգի և լեզուի մասին գաղափար չունի...։ Ես մենակ սկսեցի պահանջել աշակերտներից հայերէն խօսել։ Ընդունված սովորութեան համաձայն, տարվայ վերջում՝ աշակերտներին նուէր՝ գրքեր են բաժանում. բայց հայերէն չը կարծէք։ Իմ հարցիս՝ պատասխանում է. «Հեռու է և վերջապէս յարմար հայերէն մանկական գրքեր չը կան»։

Ոչ գիւղացի «գիտուն» և «խոհեմ» հայոց լեզուի աւագ-ուսուցիչ Պետ. Թումանեանը՝ հայ ուսուցչի միակ օրգան «Նոր-դպրոց» չէ ստանում։

Անցեալ տարի մարտ ամսում Թեմիս սրբազան առաջնորդը՝ Կովկասի Հայոց Ուսուցչական Միութեան կողմից ուղարկված «հարցացուցակները» ուղարկում է և տեղիս հայոց եկ. ծխ. դպրոցի հոգաբարձութեանը և հրամայում է «հարցացուցակում» գրել համապատասխանը և ուղարկել մէկ օրինակ իրան և և մէկ օրինակ՝ Կովկասի Հայոց Ուսուցչ. Միութեանը։ Թումանեանը առաջնորդի գրած հրամանը՝ հոգաբարձութեան անունով՝ բաց է անում և, որ գլխաւորն է, [illegible] ցոյց չը տալով հոգաբարձութեան։ Անցան մարտ, ապրիլ և մայիս ամիսները քննութիւնները վերջացան։ Խառն ժողովում ի միջի այլոց յայտնում եմ ս. առաջնորդի հրամանի մասին. Թումանեանը խոստովանում է, որ ինքն է ստացել, «բայց ժամանակ չունէր որ գրէր»։ Վերջը հոգաբարձութիւնն ինձ է յանձնում «հարցացուցակները» որ գրեմ։

Տեղիս Հայոց Բարեգործ. Ընկերութիւնը՝ հայոց դպրոցի չորսամեայ դասընթացը վերջացնող մի թիւրքահայաստանցի տղայի ընկ. հաշւով միջնակարգ դպրոց է ուզում տալ։ Ընդհանուր ժողովի ժամանակ առաջարկում եմ (որպէս անդամ)՝ հայոց միջնակարգ դպրոց տալ, օրինակ՝ Ներսիսեան դպրոցը, Գէորգեան ճեմարանը և այլն։ Այստեղ Պետ. Թումանեանը դուրս եկաւ և ի միջի այլոց սկսեց բացատրել, որ «հայկական միջնակարգ դպրոց աւարտողից ոչինչ չի դուրս գայ՝ շատ-շատ խեղճ հայ ուսուցիչ պիտի դուրս գայ, ինչպէս օրինակ ես»։ Վերջի վերջոյ Թումանեանը «յաղթութիւնը» տարաւ. 75 րուբլի գիմնազիայի համար պատրաստողին վճարեցին տալ, բայց տղան այսօր քաղաքային դպրոցում է սովորում...

1908/1909 ուս. տարվայ ընթացքում դպրոցում դասացուցակ գոյութիւն չունէր, որպէսզի գոնէ հնար լինէր իմանալ, թէ ինչ առարկաներ են դասաւանդվում դպրոցում։ Չը կայ թեմական տեսուչ, չը կայ հետաքըրքրվող, գնացող եկող։ Ընդունված սովորութեան համաձայն, տարվայ վերջում քննութիւններից առաջ մի օր Թումանեանը մանկավարժական ժողով է հրաւիրում և կարդալով իր կազմած «տեղեկագիրը» դպր. ուսումնական մասի՝ առաջարկում է ինձ ստորագրել, որ ակտի օրը պիտի կարդայ։ «Տեղեկագրում», չը հաւատալով աչքերիս, կարդում եմ, որ գրել է. «դասատուներս ընթացանք մեր կազմած ուսումնական ծրագրով»։ Ես հրաժարվում եմ ստորագրելուց և յայտնում եմ, որ ոչ մի ծրագիր ես չեմ կազմել։ Այստեղ Պետրոս Թումանեանը իսկոյն առաւ գրիչը և ջնջեց յիշեալ նախադասութիւնը, գիծ քաշեց և վրան գրեց՝ «ընթացանք հայոց եկ.-ծխ. դպրոցների ծրագրով»։ Սկսվում են քննութիւնները. քննութիւններից պարզվում է, որ աւարտող երկու աշակերտները միայն՝ հայոց լեզու (այն էլ թոյլ), ռուսաց լեզու և թւաբանութիւն են անցել, (ըստ իրանց կազմած ծրագրի), այն ինչ 1907 թւին Թումանեանը պարտաւորվում է աշխարհագրութիւն և հ. պատմութիւն ևս անցել, որի մասին ժողովրդին ևս յայտարարվում է։ Հարցնողին պատասխանեց՝ «ժամանակ չունէի»։

Սրանից պարզվում է, որ Թումանեանը շահագործել է հոգաբարձութեան հաւատը և ծնողների միամտութիւնը և, որ գլխաւորն է, օգտվելով «ամենամեծ բարիքից», այսինքն դպրոցի անտէրութիւնից, ինչպէս ինքն է իրան համար ծրագիր կազմել։ Եւ երևի այս բոլորը ծածկելու համար աւարտողներին աւարտման «վկայական» չէ տալիս։ Հոգաբարձութեանը ներկայացնում եմ 1909 թւի մայիսին ընդարձակ մի շարք տեղեկութիւններ։ Ժողովում Թումանեանը, խոստովանելով գրածներիս ճշմարտութիւնը, խոստացաւ «եկող տարի այդպէս չանել»։

1909 թւի սեպտեմբեր ամսին է. դասերից առաջ Թումանեանը մանկավարժական ժողով է կազմում և առաջարկում է իրանց (երկու ամուսինների) կազմած ծրագիրը ընդունել, մի տետրակ Թումանեանի գրած, որի մէջ չէին մոռացել և կրօնի համար ևս ծրագիր էին կազմել։ Ես յայտնում եմ, որ ինձ ձեռնհաս չեմ համարում ծրագիր կազմելու հայ դպրոցի համար, մանաւանդ որ կրօնի համար ծրագիր ունեմ. և վերջապէս հոգաբարձութեան վճռի համաձայն ծրագրային հարցը վերջացած է։ (Հայոց եկ.-ծխ. դպրոցների ծրագիրն է ընդունված)։

Նոյեմբեր ամսին է, խառն ժողով է։ Ժողովին ներկայացրել եմ մի քանի հարցեր (գրաւոր) քննելու դպրոցի վերաբերեալ, որոնցից մէկի մասին եմ գրում և որը Պետրոս Թումանեանի գլուխ գործոցն է։ Չը մոռանամ միջանկեալ գրել, որ այս և թէ վերոյիշեալ խառն և մանկավարժական և հոգաբարձական և ծխական ժողովների քարտուղարը Թումանեան Պ.-ն է։ Իսկ մանկավարժական ժողովների քարտուղարութեան հետ և նախագահ էր։ Յայտնում եմ, որ դպրոցում, որի գլխաւոր նպատակն է ռուսախօս երեխային հայախօս դարձնել և որի համար և հայոց դպրոց է կոչվում, գործածական լեզուն հայերէն չէ, թէև ես եկած օրվանից անընդհատ յիշեցրել եմ, բայց հսկող և ուշադրութիւն դարձնող չը կայ։ Այն ինչ հայախօս երեխան 3—4 ամսվայ ընթացքում հայոց դպրոց յաճախելով՝

---

*) Սրանք արտաքսվեցին Ս.-Դ. Հնչ. կուսակցութիւնից դեռ տարիներ առաջ, որպէս վնասակար տարրեր։ Սրանց ձեռքով սպանվեց ողբացեալ Արփիար Արփիարեանը Եգիպտոսում և Աբէկ Ունճեան հարուստը Կ. Պօլսում՝ ոճրագործ խմբակին դրամ չը տալու պատճառով։ Միևնոյն խմբակի վճռով 1904 թւին Լօնդօնում սպանվեցին հայ գործիչներ՝ Որսորդը, Համբը և Սաղաթէլ Սագունին, որոնք սրանց արտաքսողների թւին չէին պատկանում։ Յ. Գ.

ռուսախօս է դառնում (օրինակներ շատ կան)։ Հայոց լեզուի հայ ուսուցիչ Պետրոս Թումանեանը պատասխանում է այսպէս, որը բառ առ բառ գրի եմ առնում. «Ի զուր աշխատանք է. որքան որ ուզենանք և աշխատենք, մենք չենք կարող ռուսանալու առաջը առնել և երեխաներին արգելելով դասից դուրս ռուսերէն խօսելը՝ ինքնախաբէութիւն է»։ Այստեղ հոգաբ. անդամներից մէկը միայն (երեք էին) նկատողութիւն արեց ասելով.«Պ. Թումանեան, իրաւունք չունենք այդպէս ասելու»։ Ես պահանջեցի, որ արձանագրութեան մէջ գրվեն Թումանեանի խօսքերը։ Բայց որովհետև ժողովի քարտուղարը այդ խօսքերն ասողն էր ինքը Թումանեանը, չը գրվեց մատեանում, որից յետոյ և վերջացաւ ամեն ինչ։ Թումանեանը ինձ դպրոցից հեռացնելու համար հոգաբարձութեանն ստիպեց ինձ հեռացնել դպրոցից, հակառակ դէպքում ինքը իր կնոջ վարժուհու հետ հրաժարական կը տայ։ Ինձ ստիպեցին թողնել կրօնը և հեռանալ, հակառակ սրբազան առաջնորդի կամքի։

Ստեփան քահ. Իսկեանդարեանց

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱԶԱՏ ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԵԱՆ ԵՒ ԿՐՕՆԱԿԱՆ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԿՕՆԳՐԷՍԸ ԲԵՐԼԻՆՈՒՄ

V*)

Բեռլին, 8 օգոստոսի

Անցեալ անգամ մոռացայ գրելու, որ «Կրօն և խաղաղութիւն» ժողովում մի բանաձև է ընդունված, որի միտքն այն է, թէ քրիստոնէութեան ներկայացուցիչները ամեն կերպ պէտք է նպաստեն խաղաղութեան հաստատվելուն աշխարհի մէջ և այդ պատճառով էլ իրանց ուրախութիւնն են յայտնում, որ այդպիսի մի խաղաղութեան ֆակտոր է ստեղծված յանձին Հաագայի կօնֆերենցիայի։

Բացի դրանից՝ նոյն ժողովում կազմվել է մի յանձնախումբ, որին անդամակցում են երկու գերմանացի (մէկը «Christliche Welt» ազատամիտ թերթի խմբագիր ուսուցչապետ Ռադէն) և երկու ֆրանսիացի, և որի նպատակն է ամեն կերպ նպաստել, որ Ֆրանսիայի և Գերմանիայի բարեկամական յարաբերութիւնները այսուհետև քանի գնան՝ այնքան ամրապնդվեն։

Այսօր, երկուշաբթի, նշանակված էր իսկապէս կօնգրէսի իսկական բացումը, որովհետև մինչև այժմ եղածը համարվում էր մի տեսակ նախապատրաստութիւն, ինչպէս յայտնեց կօնգրէսի նոր նախագահ՝ գերմանական րէյխստագի անդամ Շրադերը։ Այդ բանը կարևոր էր համարվել նախապէս վերջացնել, որպէսզի հնարաւոր լինի կօնգրէսի մնացած գլխաւոր զբաղմունքները գոնէ 3 օրում վերջացնել։

Եւ այդպէս՝ նախագահը բաց արեց կրկին անգամ արդէն վաղուց սկսված կօնգրէսը և մի քանի խօսքով ուրուագծեց նրա ծագումն ու նպատակը, մօտաւորապէս այն խօսքերով, որ մենք գրել ենք առաջին յօդուածում։ Ապա քարտուղարը՝ ամերիկացի Վենդտէն կարդաց կօնգրէսի տեղեկագիրը, յիշատակելով թէ ովքեր կօնգրէսի նշանաւոր անդամներից մեռել են։

Դրանից յետոյ սկսվեցին առաջին գլխաւոր թեմայի բանախօսութիւնները։ Նախագահում է Գիսենի համալսարանի ուսուցչապետ Գուստաւ Կրիւգեր։ Առանձին գլխաւոր թեմայի նիւթն էր. «Ի՞նչ են պարտական ուրիշ ազգերի կրօնական ազատամիտները գերմանական աստուածաբանութեանն ու բարեպաշտութեանը»։ Խօսեցին Անգլիայի ներկայացուցիչը անգլիերէն։ Ֆրանսիայինը՝ ֆրանսերէն, Հօլլանդիայինն ու Աւստրալիայինը՝ գերմաներէն և վերջապէս տողերիս գրողը՝ հայոց եկեղեցու ներկայ դրութեան և նրան անհրաժեշտ վերանորոգութեան մասին։ Բոլոր ճառախօսները վարձատրվեցին ծափահարութիւններով, յատկապէս մեծ ուշադրութեան արժանացաւ հայոց եկեղեցու մասին կարդացված ռեֆերատը, որի հեղինակին ուժգին ծափահարութիւններով դիմաւորեցին նաև ամբիօն բարձրանալու ժամանակ։

Բոլոր ճառախօսների ասածների մէջ կարմիր թելի նման անցնում էր այն գիծը, թէ նոր կեանք և նոր ուղղութիւն իրանց երկրներում ու եկեղեցիների մէջ մտել է շնորհիւ գերմանական նորագոյն աստուածաբանութեան ազդեցութեան և այդ նոր կեանքն ու ուղղութիւնը առաջադիմել կարող է միայն դարձեալ գերմանական աստուածաբանութեան ու կրօնական կեանքի անընդհատ ազդեցութեան շնորհիւ։ Գերմանական աստուածաբանութիւնը մուտք է գործել և գրաւել է ամբիօններ ոչ միայն Անգլիայում, Ամերիկայում (որի ներկայացուցիչը ներկայ չէր դժբաղդաբար), Ֆրանսիայում և Հօլլանդիայում, այլ և հեռաւոր Աւստրալիայում և մինչև անգամ կարողացել է ազդեցութիւն ձեռք բերել հայոց եկեղեցու մէջ։

Երկուշաբթի ճաշից յետոյ և երեկոյեան, և երեքշաբթի ճաշից առաջ նշանակված էր «Գերմանական աստուածաբանութեան զօրահանդէսը», ինչպէս կատակով ասում էին միմեանց կօնգրէսի անդամները։ Գերմանական աստուածաբանութեան նշանաւորագոյն ներկայացուցիչները տեղեկութիւն պէտք է տային օտարներին, թէ ինչ դրութեան մէջ է գտնվում այս րոպէիս գերմանական աստուածաբանութիւնն ու եկեղեցին։ Այնքան հարուստ էին այդ ճառերի բովանդակութիւնն ու բազմազան, որ անհնարին և անմիտ է նրանց մասին մի քանի համառօտ խօսք ասելով վերջացնել այսպիսի մի նկարագրական յօդուածում։ Այդ բոլոր ռեֆերատները պէտք է տպվեն կօնգրէսի արձանագրութիւնների մէջ. այնպէս որ մենք առիթ կունենանք դեռ ևս նրանցից մի քանիսի մասին մանրամասն տեղեկութիւններ հաղորդելու։ Կօնգրէսի այս երկրորդ գլխաւոր թեմաճ իր վերջը գտաւ Տրեօլչի բանախօսութեամբ՝ «Ազատ քրիստոնէութիւն հնարաւո՞ր է աշխարհում»։

Այդ բանախօսութեան հետ ամբողջական թարգմանութեամբ կը ծանօթացնենք հայ ընթերցողներին, որովհետև այնտեղ շօշափվում են այն խնդիրներն յատկապէս, որոնք մեր կեանքի համար էլ առանձին նշանակութիւն ունեն և այն հարցերի պատասխանն են տալիս հեղինակաւոր բերանով, որ մեր լրագրութեան մէջ բարձրացել են իմ «Հայոց եկեղեցու վերանորոգութեան խնդիրը» գրքոյկի առիթով և նրա շուրջը։ Այնտեղ կը տեսնեն մերոնք ևս, որ եկեղեցական կապանքներից ազատ քրիստոնէութիւն անհնարին չէ այս աշխարհում, որ ընդհակառակն՝ միայն այդպիսի, ժամանակակից գիտութեան ու առաջադիմութեան համապատասխան քրիստոնէութիւնը գոյութեան իրաւունք ունի դեռևս կամ կարող է ունենալ։

Երեքշաբթի ճաշից յետոյ նշանակված էին օտարերկրացիների բազմալեզու ճառերը այլազան նիւթերի մասին և նոյն օրը երեկոյեան ու չորեքշաբթի առաւօտեան կօնգրէսի երրորդ գլխաւոր թեմաճ։ Հնարաւո՞ր է կրօնական զանազան դաւանութիւնների մէջ համակրական յարաբերութիւն։ Խօսեցին կաթօլիկների (ի հարկէ մօդերնիստ) և հրէաների ներկայացուցիչներ և ուրիշներ։ Ընդհանուր եզրակացութիւնն այն էր, որ այդպիսի բարեկամական կամ համակրական յարաբերութիւններ հնարաւոր են զանազան կրօնական դաւանութիւնների մէջ միայն ազատ քրիստոնէութեան հողի վրա։ Պատմութիւնը ցոյց է տուել և ներկան էլ դրա հակառակը չէ ապացուցանում, որ եկեղեցական քրիստոնէութեան տարբեր դաւանութիւնները ատելութեամբ ու թշնամութեամբ են լցված դէպի միմեանց։ Խօսեց նաև բուդդայականութեան մի ներկայացուցիչ, որ, նկարագրելով բուդդայականութեան ծագումն ու զարգացումը, յիշեցրեց, թէ ինչպիսի վատ դեր են կատարել քրիստոնէութեան միսիօնարները իրանց քարոզութեամբ, որովհետև ոչնչացրել են հնդիկների մէջ ազգային զգացմունքը։ «Միսիօնարներ մի ուղարկէք մեզ մօտ. ուղարկեցէք մեզ մօտ ձեր գիտնականներին, որոնք մեզ ամենալաւ բանը կարող են տալ, ձեր գիտութիւնը, և մենք դրանով առաջ կը գնանք և մեր կրօնը կը կարողանանք յարմարեցնել ժամանակի պահանջներին ու գիտութեանը»։

Չորեքշաբթի երեկոյեան նշանակված էր կօնգրէսի վերջին նիստը։ Պատեր Հիացինտ Լօյզօն խօսեց եկեղեցիների մէջ միութիւն հաստատելու հնարաւորութեան մասին և եկաւ այն եզրակացութեան, որ Դեօլլինգերն արդէն յայտնել է տասնեակ տարիներ առաջ։ Գործնական միութիւն հաստատել եկեղեցիների մէջ անհնարին է, բայց համբերատարութեան և կրօնական առաջադիմութեան սկզբունքները կարող են այն ազդեցութիւնն ունենալ, որ մի եղբայրական յարաբերութիւն առաջ գայ ոչ միայն քրիստոնէական եկեղեցիների, այլ նաև վերջինների և ոչ-քրիստոնէական եկեղեցիների մէջ։ Որոտընդոստ ծափահարութիւններն եղան նրա ճառի պատասխանը։

Ապա կօնգրէսի նախագահ Շրադերը իր գոհունակութիւնն յայտնեց կօնգրէսի աջողութեան համար։ Նրան մասնակցել են 2100 մարդ ու կին առանձին տոմսակներով իբրև կօնգրէսի անդամ, մի քանի հազար հոգի էլ մասնակցել են ժողովրդական մեծ ժողովներին, որ եղել են անցեալ կիրակի օրը։ Այդ 2100 անդամներից հազիւ $^{1}/_{10}$ մասն է աստուածաբան։ Նախագահի վերջին խօսքերն էին. «Աշխատենք ամեն մէկս, որ կօնգրէսի մտքերն ու գաղափարները մեր շրջաններում տարածվեն և աւելի բարեկամներ ձեռք բերեն, որպէսզի գործնական կեանքի մէջ էլ մուտք գործեն։ Ես փակում եմ կօնգրէսը և բացագանչում՝ ցտեսութիւն Պարիզում»։

Սրանով փակվեց «Ազատ քրիստոնէութեան» հինգերորդ կօնգրէսը։

Հետևեալը տեղի կունենայ 3 տարի յետոյ Պարիզում։

Երուանդ Տէր-Մինասեանց

ԼՈՐԴ ՍՊԵՆՍԷՐԻ ՄԱՀԸ

Վախճանվեց լորդ Սպէնսէրը, ազատամիտ կուսակցութեան հնագոյն լիդէրը լորդերի ժողովում։

Հանգուցեալը ծնվել է 1835 թւին և նա Անգլիայի ամենաաչքի ընկնող քաղաքական գործիչներից մէկն էր։ Նա նախ փայլուն պալատական էր արքայական պալատում, բայց վերջը խորասուզվեց քաղաքական գործունէութեան մէջ։

Նա երկու անգամ փոխարքայի պաշտօն վարեց Իրլանդիայում, 1869 թւից մինչև 1874 թ. և 1882-ից մինչև 1885 թւը։ Քաղաքական մի քանի սպանութիւններից յետոյ Դուբլինում լորդ Սպէնսէրին վիճակվեց մի շարք մահվան դատավճիռներ ստորագրել իրլանդական ագիտատօրների համար, որի պատճառով ամենախիստ յարձակումների ենթարկվեց իրլանդական մամուլի կողմից։

Երբեմն շատ հարուստ մարդ լինելով, լորդ Սպէնսէր ամենամեծ գրադարանն ունէր Անգլիայում։ Մի քանի տարի առաջ լորդի դրամական գործերը խախտվեցին, որը ստիպեց նրան ծախել իր գրադարանը։ Նրա գրադարանը գնեց 5 միլիօն ֆրանկով տիկին Ռայլանդ՝ մի հոյակապ հասարակական գրադարանի համար, որ հիմնարկեց նա ի յիշատակ իր ամուսնու։

ՊՐՈՒԴՕՆԻ ԱՐՁԱՆԻ ԲԱՑՈՒՄԸ

Օգոստոսի 1-ին մեծ հանդէսով տեղի ունեցաւ Պրուդօնի արձանի բացումը նրա հայրենիքում՝ Բէզանսօնում։ Հանդիսին ներկայ էին հանրապետութեան նախագահը, Պիշօն, Տրուլիօ և Վիվիանի մինիստրները, Պրուդօնի ազգականները, մի քանի պատգամաւորներ և սենատորներ և բազմաթիւ հասարակութիւն։ Արձանը ներկայացնում է Պրուդօնին նստած դրութեան մէջ՝ բաց գրքով ծնկների վրա, նրա ետևը կանգնած է Արդարութիւնը, որ դրել է իր ձեռքը նրա ուսի վրա։ Ներքև արձանի պատուանդանի վրա քանդակված է մի ծնկաչօք պատանի, որը դափնեայ ճիւղ է մատուցանում. դա նշանաբան է երախտագիտութեան բանուորների կողմից դէպի Պրուդօնը։

Արտասանվեցին մի քանի ճառեր, կարդացվեց այդ առիթով գրված մի ոտանաւոր։ Ճառերի մէջ ամենից շատ աչքի էր ընկնում աշխատանքի մինիստր Վիվիանիի ճառը, որ նուիրված էր հռչակաւոր սօցիալիստի բնորոշման և նրա թողած գաղափարական ժառանգութեան գնահատութեանը։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Սօցիալ-դեմօկրատները Գերմանիայում.— Մագդեբուրգում մօտերս կայանալիք հերթական համագումարի համար գերմանական սօցիալ-դեմօկրատիկ կուսակցութեան կենտրօնական մարմինը հրատարակել է իր տարեկան հաշիւը, որից գերման լրագիրները քաղել են հետևեալ թւերը։

Հաշիւը հաստատում է, որ վերջին տարում կուսակցութեան կասսան տուրք մուծող անդամների թիւը 633,309 հոգուց բարձրացել է մինչև 722,830 հոգու, այսինքն աճել է աւելի քան 14 տոկոսով։ Նոր 89,520 անդամներից տղամարդիկ են 69,135, իսկ կին՝ 20,386։ Կուսակցութիւնը տարվայ մէջ կազմակերպել է իր անդամների համար 29,900 ժողովներ, և 13,800 ժողովներ կողմնակի անձանց համար։ Տարվայ մէջ տարածվել են 23 միլիօն թերթիկներ, կոչեր։ Տեղական ինքնավարութեան մարմինների մէջ անցեալ շրջանում կային 6431 սօցիալ-դեմօկրատ անդամներ, իսկ հաշւետուութեան տարին՝ 7729։ Տարվայ ընթացքում դատարանը դատապարտել է կուսակցութեան անդամների՝ ընդհանուր հաշւով 37 տարով բանտարկութեան և որոշել է 30,524 մարկ տուգանք։

Սօցիալ-դեմօկրատները մեծ յոյս ունեն ապագայ ընտրութիւնների վրա։ Դրան լաւ ապացոյց այն է, որ մասնակի պարլամենտական ընտրութիւններին նրանք յաղթանակներ տարան այն շրջաններում, որտեղ երբէք չէին սպասում. նոյն իսկ չափաւոր Գերմանիայի քաղաքական գործիչները կարծում են, որ նոր պարլամենտում նրանց թիւը կանցնի հարիւրից. ներկայումս պարլամենտում կայ մօտ 50 սօց.-դեմօկրատ անդամ, իսկ անդամների ամենամեծ թիւը, որ ունեցել է կուսակցութիւնը պարլամենտում, չէ անցել 80-ից՝ նախորդ պարլամենտի նստաշրջանում։

Ինչ ասել կուզէ, որ այս տարվայ յաղթութիւնները աւելի քան լաւատես են դարձրել կուսակցութեան բերան «Vorwärtz»-ին, որը նորերս յայտարարում էր, թէ ագրար-պահպանողական խաւարը երկրի վրայից չքանալու վրա է։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐ. ՀԵՌ. ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

11 օգոստոսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Ռուսաց կայսերական աւտոմօբիլային ընկերութիւնը որոշել է նախաձեռնութիւն յանձն առնել միջազգային աւտոմօբիլային արշաւ կազմակերպելու Պետերբուրգից—Բեռլին—Պարիզ 1911 թւի ամառը։

ՎԻԵՆՆԱ։ Ցէտինէի աւստրո-ունգարական դեսպանը յանձնեց իշխանուհի Միլէնին մի զոյգ սքանչելի ձիաներ իբրև նուէր Ֆրանց-Յօվսէֆ կայսրից իշխանական զոյգերի ոսկի ամուսնութիւնը տօնելու առիթով։

ՄՕԳԻԼԷՎ (Պոդօլեան)։ Լիպկանի աւանում հրդեհից այրվել են 300-ից աւելի տներ։

ՄԻՆՍԿ։ Քաղաքային վարչութիւնը որոշել է ուղարկել հիւանդանոցի գլխաւոր բժշկին պրօֆեսսօր Էրլիխի մօտ, ուսումնասիրելու «606» պրէպարատը։

ԿԻԵՎ։ Շրջանային ինտենդանտական վարչութիւնը հաշտարար միջնորդների և ոստիկանութեան միջոցով արած յայտարարութեամբ հրաւիրում է կալուածատէրերին, կապալառուներին և գիւղատնտեսական ընկերութիւններին վաճառել հացահատիկները և ուրիշ արդիւնքները անմիջական կերպով ինտենդանտութեան։

ՏՕՄԱՇԵՎ. Այրվել է «Գոլպէրն» ակցիօներական ընկերութեան մահուդի գործարանը։ Վնասը 400,000-ի է հասնում։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Ո Ւ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ամառնային երթևեկութիւն)

(Ժամերը նշանակված են Թիֆլիսի ժամանակով)

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է

ԲԱՔՈՒ՝ մարդատար № 12 գնացքը՝ 2 ժ. 38 ր. ցերեկ., Գանձակ է հասնում 9 ժ. 9 ր. երեկ., Եւլախ՝ 11 ժ. 20 ր գիշերվայ, Հաջի-Կաբուլ՝ 4 ժ. 16 ր. գիշ., Բալաջարի 8 ժ. 1 ր. առաւօտ., Բաքու՝ 8 ժ. 48 ր. առաւ.։ Արագ № 2 գնացքը՝ 8 ժ. 15 ր. առաւ. Գանձակ է հասնում 1 ժ. 28 ր. ցեր., Եւլախ՝ 3 ժ. 6 ր. ցեր., Հաջի-Կաբուլ՝ 7 ժ. 15 ր. երեկ., Բալաջարի՝ 10 ժ. 8 ր. գիշ., Բաքու՝ 10 ժ. 53 ր. գիշ.։ Փոստատար № 4 գնացքը՝ 10 ժ. 4 ր. գիշ., Գանձակ է հասնում 4 ժ. 18 ր. գիշ., Եւլախ՝ 6 ժ. 26 ր. առաւ., Հաջի-Կաբուլ՝ 11 ժ. 23 ր. առաւ., Բալաջարի՝ 3 ժ. 9 ր. ցեր., Բաքու՝ 4 ժ. 45 ր. ցեր.։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆ՝ փոստատար № $^{74}/_{75}$ 12 ժ. 22 ր. գիշ., Ալէքսանդրօպօլ է հասնում 11 ժ. 21 ր. առ., Էջմիածին կայար.՝ 4 ժ. 49 ր. ցեր., Նախիջևան՝ 10 ժ. 51 ր. գիշ., Ջուլֆա՝ 12 ժ. 29 ր. գիշ.։ Ապրանքատար-մարդատար՝ 4 ժ. 15 ր. ցեր., Ալէքսանդրօպօլ է հասնում 3 ժ. 10 ր. գիշ., Էջմիածին՝ 8 ժ. 38 ր. առաւօտեան, Երևան՝ 10 ժ. 9 ր. առ.. և սրանից դէնը այլևս չէ գնում։

ԲԱԹՈՒՄ՝ մարդատար № 5՝ 7 ժ. 31 ր՝ երեկ., Միխայլօվօ է հասնում 11 ժ. 45 ր. գիշ., Բաթում՝ 9 ժ. 30 ր. առաւ.։ Փոստատար № 3՝ 1 ժ. 24 ր. ցեր., Միխայլօվօ է հասնում 5 ժ. 47 ր. երեկ., Բաթում՝ 3 ժ. 25 ր. գիշ.։ Արագ № 1 գնացքը՝ 10 ժ. 36 ր. գիշ., Միխայլօվօ է հասնում 2 ժ. 39 ր. գիշ., Բաթում՝ 10 ժ. 49 ր. առաւօտեան։

ԲՕՐԺՕՄ՝ մարդատար № $^{7}/_{8}$ 8 ժ. 28 ր. առ. Միխայլօվօ է հասնում 12 ժ. 42 ր. ցեր., Բօրժօմ՝ 2 ժ. 3 ր. ցեր.։ Մարդատար № $^{9}/_{10}$ 3 ժ. 36 ր. ցեր., Միխայլօվօ է հասնում 7 ժ. 56 ր. երեկ., Բօրժօմ՝ 9 ժ. 13 ր. գիշերվայ.

ԹԻՖԼԻՍ Է ՀԱՍՆՈՒՄ

ԲԱՔՈՒԻՑ՝ փոստատար № 3՝ 12 ժ. 24 ր. ցեր.։ Արագ № 1 գնացքը՝ 10 ժ. 36 ր. գիշ.։ Մարդատար № 11՝ 6 ժ. 58 ր. առ (այս գնացքը Բաթում չէ գնում)։

ԲԱԹՈՒՄԻՑ՝ արագ № 2 գնացքը՝ 7 ժ. 25 ր. առաւ.։ Փոստատար № 4՝ 9 ժ. 4 ր. երեկ.։ Մարդատար № 6՝ 11 ժ. 4 ր. առ. (այս գնացքը Բաքու չէ գնում)։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆԻՑ՝ փոստատար № $^{72}/_{73}$՝ 6 ժ. 8 ր. առաւ.։ Մարդատար-ապրանքատար՝ 6 ժ. 33 ր. երեկոյեան։

ԲՕՐԺՕՄԻՑ՝ մարդատար № $^{9}/_{10}$ 8 ժ. 8 ր. երեկ.։ Մարդատար № $^{7}/_{8}$ 6 ժ. 28 ր. առաւ.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԻՄ Կրօնի դասագրքեր ցանկացողները կարող են դիմել բոլոր հայ գրավաճառներին և ինձ (Бебутовская ул. 20)։ Զեղչը՝ ինչպէս յայտարարված է գրքերի կազմի վրա։
ՍԱՀԱԿ ա.. քահ. ՍԱՀԱԿԵԱՆՑ
(ե. ու.) 903. 10—3

Ուղարկում եմ պօստով, վերադիր վճ. և առանց կանխավճարի «Տրիումֆ» շէվիոտի մի ամբողջ կտոր 4¼ արշ., տղամարդկանց
ՋԳԵՍՏԻ ՀԱՄԱՐ 2 ր. 75 կ.
Չը նայած որ շատ էժան է, «ՏՐԻՈՒՄՖ» կտորը բրդից է (ոչ բամբակից) և ունի բոլոր լաւ կտորների յատկութիւնը—միանգամայն ամուր է, գործնական և շքեղ։ Գոյները՝ սև, մուգ-կապոյտ, շագանակագոյն, ձիթագոյն։ Ճանապարհածախսը 55 կ.։ Նոյնպէս ուղարկում եմ պատրաստի, կարված, միանգամայն գործնական և գեղեցիկ ՊԻՋԱԿ 2 րուբլով տարվայ ամեն սէզօնին մաշելի։ Ճանապ. 55 կ.։ 2 րուբլով ՇԱԼՎԱՐ ուղարկում եմ պատրաստ, ամուր և գործնական կտորից կարված։ Ճանապարհածախսը 35 կ.։ Երեք և աւելի կտոր բերել տալուց՝ ճանապարհածախսը իմ հաշւին։ Պահանջները հասցէագրել.
г. Лодзь, № 70, фабрика ЗИГМУНТА РОЗЕНТАЛЯ.
Թղթակցութիւնները ռուսերէն։
(ա. օ.) (B. 50155) 870. 17—10

Երևանի ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑԻ բարձր դասարանների համար հարկաւոր է
Մի լեզուագէտ-մասնագէտ
ՈՒՍՈՒՑԻՉ
ռուսաց լեզուի, ռուսաց գրականութեան և ռուսաց պատմութեան համար շաբաթական 24 դասով և 70 ր. դասագնով։ Ցանկացողները իրանց խնդրագրերի հետ պէտք է ներկայացնեն ուսման իսկական վկայագրերը կամ նրանց վաւերացված պատճէնները։
Խնդրագրերը պէտք է ուղարկել մինչև օգոստոսի 20-ը Երևան՝ Հոգաբարձութեան հասցէով։
(ա.օ.) 899. 10—9

2 ՋԳԵՍՏ 5 Ր. 25 Կ.
Տարածելու նպատակով՝ մենք ուղարկում ենք 12 ր. փոխարէն 5 ր. 25 կոպէկով հետևեալ զգեստացու 2 կտորները. 1) 4¼ արշ. ֆրանս տրիկօ տղամ. զգեստի համար, շատ ամուր, գործնական և մօդայից նկարներով բրդէ կտոր։ 2) 8 արշ. կտոր «Անգլէյ», կանանց ամբողջ զգեստի համար, միանգամայն մօդայից և գեղեցիկ բրդէ կտոր։ Այդպիսի 2 կտոր լաւ տեսակից՝ ուղարկում ենք 5 ր. 75 կ.-ով։ Ճանապարհածախսը 55 կ.։ Երկու և աւելի զոյգ կտոր բերել տալուց ճանապարհածախսը մեր հաշւին։ Ուղարկում ենք պօստով, վերադիր վճ., առանց կանխավճ. և երաշխաւոր., եթէ չը հաւանվի՝ յետ ենք վերցնում։ Պահանջները հասցէագրել. г. Лодзь, № 70. въ фабрику ЗИГМУНТА РОЗЕНТАЛЯ.
Թղթակցութիւնները ռուսերէն։
(ա. օ.) (B. 50257) 871. 17—10

Լոյս տեսաւ եւ վաճառվում է
ԱՐՇ. ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆԻ
ԽԱՒԱՐ ԱՇԽԱՐՀՈՒՄ
պատմուածքներ գիւղական կեանքից
307 էջ, գինն է 1 ռուբլի
Այս պատմուածքներից մի քանիսը, օրինակ՝ «Վարոսի յաճախորդները», «Կարմիր ճիպոտը». «Սէրոբենց ամերը» և այլն, տպագրված են եղել «Մուրճում» 1901—1902 թ. թ., իսկ միւսները հեղինակի անտիպ աշխատութիւններից են։
Գումարով գնողներին 20% զեղչ։
Դիմել հեղինակին՝ Батумъ, Государствен. Банкъ. Инспектору мелкаго кредита, А. Шахназаряну.
(չ. ու.) 896. 5—4

2 ՋԳԵՍՏԱՑՈՒ 4 ՌՈՒԲԼՈՎ
Տղամարդկանց հագուստեղէնի շրջանում նորութիւն է «Ճէվիօտ Տուրինը»։ Այնպիսի էժան գնով՝ ինչպէս 2 ռուբ., 4¼ արշ. կտորը, տղամ. ամբողջ զգեստացու, ոչնչով չէ տարբերվում արշ. 2—3 ռուբ. արժեցող կտորից և ունի վերջինիս բոլոր յատկութիւնները, այն է՝ բարձր տես. ամրութիւն, գործնականութիւն և էլեգանտութիւն։ Գոյները՝ սև, մուգ-կապոյտ, շագանակագոյն, ձիթագոյն։ Այդպիսի 2 կտորը ուղարկվում է 4 ռուբլով, ճանապարհածախսը՝ 70 կ., պօստով, վերադիր վճ.. առանց կանխավճ.։ Չորս և աւելի կտոր բերել տալուց՝ ճանապարհածախսը ֆաբրիկայի հաշւին։ Առանց ռիսկի, լրիւ երաշխաւոր., եթէ չը հաւանվի՝ յետ ենք վերցնում։ Պահանջները հասցէագրել. въ фабрику шерстяныхъ издѣлій Т-ВА «ЭХО», г. Лодзь, № 70.
Թղթակցութիւնները ռուսերէն։
(ա. օ.) (B. 50359) 872. 17—10

Լոյս են տեսել և վաճառվում են
ՆԻԿ. ՍԱՐԳՍԵԱՆԻ
Կենսաբանական ուղղութեամբ կազմված
ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ
ԲՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԴԱՍԱԳՐՔԵՐԸ
ՄԱՐԴ և ԿԵՆԴԱՆԻ (տարրական մարդակազմ. և կենդանաբանութիւն) 204 երես, 70 կոպ.
ԲՈՅՍ (տարրական բուսաբանութիւն) 128 երես . . 50 կոպ.
Դիմել՝ Թիֆլիս, «Գուտտենբերգ», «Կենտրօնական», «Գիր» և «Փարոս» գրավաճառանոցները կամ կազմողին հետևեալ հասցէով՝ Кочубеевскій переулокъ, 13.
Վաճառվում են նաև
Վիլհելմ Բէօլշէ.—«ՄԱՐԴՈՒ ԾԱԳՈՒՄԸ», գերմ. թարգմ. Նիկ. Սարգսեան, գինը 40 կոպ.
Նիկ. Սարգսեան.—«ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԳՈՅՆԵՐԸ» . . գինը 15 կոպ.
(օ. մ.) 889. 10—6

Լոյս են տեսել և վաճառվում են
Յ. ՏԷՐ-ՄԻՐԱՔԵԱՆԻ
Դասագրքերը։
1) Իրաշրջանների վերածված թւաբանական խնդիրների ժողովածու։ Ա. և Բ. տարիների դասընթաց։ 1910 թ. 30 կոպ.
2) Հարտման-Ռուցամի՝ Իրաշրջանների վերածված թւաբանական խնդիրների ժողովածու։ Գ. տարվայ դասընթաց։ Բ. տպ. 1910 թ. 30 կոպ.
3) Նոյն գրքի՝ Դ. տարվայ դասընթաց։ 1909 թ. 35 կոպ.
Պահեստը «Գիր» գրավաճառանոցում (Тифлисъ, Вельяминовская ул. № 7).
(ե. ու.) 916. 6—2

ՄԱՄՈՒԼԻ ԲԻՒՐՕ
(ԱՂԲԻՒՐ-ՏԱՐԱԶԻՆ կից)
ՄԵԿ ՄԻԼԻՕՆ 700 ՀԱԶԱՐ
քառ. սանտ. ընտիր ԿԼԻՇԷ փայտի, պողպատի, պղնձի և ցինկի վրա տրվում են վարձու պարբերական հանդէսների, դասագրքերի, ալմանախների, ալբոմների, օրացոյցների համար։ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ ԵՆ ամեն տեսակ կլիշէների պատուէրներ, որ պատրաստվում են Եւրոպայի հռչակաւոր արուեստանոցներում։ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ ԵՆ տպագրական գործի հետ առնչութիւն ունեցող ամեն տեսակ պատուէրներ։ ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄ ԵՆ ցանկացողների համար օրացոյցներ, գրքեր, ալբոմներ, բրօշիւրներ, պիէսներ և այլն և այլն։
Դիմել Тифлисъ, Бюро Печати. Мадатовская № 5.
(չ. ու.) 810. 0—10

ԱՌԵՒՏՐԻ ԵՒ ԱՐԴԻՒՆԱԲ. ՄԻՆԻՍՏՐ. ՏՆՕՐԻՆՈՒԹԵԱՆ ՆԵՐՔՈՅ ԳՏՆՎՈՂ
Տ. Մ. ՓԻԼՕՅԵԱՆԻ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿՈՒՐՍԵՐՈՒՄ
Թիֆլիս, Միխայլեան պր. 24/4.
Տալիս են երկսեռ անձերին մասնագիտական առևտր. կրթութիւն։
Դասընթացքն աւարտողներին տրվում են ատեստատներ։
ԳՈՐԾՆԱԿԱՆ պարապմունքները կատարվում են կուրսերում Pitman և Պարիզի Pigier դպրոցների ձևով կազմակերպված Muster-Comtori-ում։ Նիւթերն առնվում են ռէալ կեանքից։ Առարկաներն են. ա) ՊԱՐՏԱԴԻՐ.—1) Հաշւապահութիւն (պարզ, իտալ., գերմ., ֆրան., ամերիկական, բանկային և գործարանական), 2) Առևտրական թւաբանութիւն, 3) Քաղաքատնտեսութիւն, 4) Օրէնսգիտութիւն (առևտրական իրաւունք, մուրհակի կանոնադրութիւն), 5) Առևտրական թղթակցութիւն, 6) Թւաբանութիւն համրէչի վրա, 7) Վայելչագրութիւն, արագագրութիւն (ամենավատ ձեռքի ուղղումն). բ) ՈՉ-ՊԱՐՏԱԴԻՐ.—1) ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐ, 2) սղագրութիւն, 3) դակտիլօգրաֆիա (ռեմինգտօն և ուր.) և 4) առևտրական թղթակցութիւն օտար լեզուներով։ Զբաղմունքները կատարվում են և կատ-դատ։ Ունկնդիրների թւի շատութեան պատճառով բացվում է զուգընթաց բաժանմունք։ Ունկնդիրների թիւը սահմանափակված է։ Պարապմունքների սկիզբը սեպտեմբերի 15-ին։ Խնդիրների ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից, առ. 10—2 ժ. և երեկ. 4—7 ժ.։ Ծրագիրը և կանոններն ուղարկվում և տրվում են ձրիաբար կուրսերի շենքում։
Կուրսերի հիմնադիր՝ առևտր. գիտութեան կանդիդատ՝ Տ. ՓԻԼՕՅԵԱՆ
(ու. կ. չ.) 907. 0—4

---

*) Տես «Մշակ» №№ 168, 169, 170 և 171.

Типографія „Экономія" Большая Ванская № 3.